Azg Ազգ

ISSN: 1829-1651

Վրաց-ադրբեջանական հարաբերությունները արվո՞ւմ են

ՎԱՀԲԻՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանական լրատվամիջոցները Վրաստանում խորհրդարանական ընտրություններից եւ նոր կառավարության ձեւավորումից հետո չափազանց սրված հետաքրքրություն են ցուցաբերում այդ երկրի ադրբեջանցի փոքրամասնության խնդիրներին: Ընդ որում, գրեթե բոլոր հրապարակումներում գերիշխում է բացասական ֆոնը: Մասնավորապես, «Բազմամշակութային Վրաստան» անվանված՝ Թբիլիսիում տպագրված քարտեզի մասին, որտեղ ներկայացված են Վրաստանում բնակվող բոլոր ժողովուրդները՝ իրենց էթնիկ առանձնահատկություններով, Բաքվում այն կարծիքին են, որ «ադրբեջանցի տղամարդու դիմանկարը նմանեցվել է հարեմի ներքինու»: Այստեղ ադրբեջանցիները, ինչպես միշտ, տեսել են «հայկական հետագիծ». բանից պարզվում է, որ նման «քարտեզ հրատարակելու գաղափարի հեղինակը «Բազմազգ Վրաստան» ՀԿ-ն է, իսկ վերջինիս նախագահը Առնոլդ Ստեփանյանն է»:

Դրան հետեւեց Վրաստանի ազգային փոքրամասնությունների իրավապաշտպան մոնիտորինգային խմբի ղեկավար Էլբրուս Մամեդովի բացառիկ հարցազրույցը vesti.az-ին: Առիթը Վրաստանում վերջերս հրապարակված «Վարդերի հեղափոխություն. արդյունքներ» զեկույցն է, որի հեղինակներն են Իոսիֆ Արչվաձեն, Գեորգի Վեկուան, Նանա Դեւդարիանին, Լեւան Օսիձեն եւ Գուլբաաթ Ռզխելիձեն:

Ի՞նչն է տվյալ զեկույցում հարուցել Էլբրուս Մամեդովի զայրույթը: Պարզվում է, որ այնտեղ ադրբեջանցիների մասին ասված է, որ «աչքի են ընկնում բնական աճի բարձր տեմպերով, ինչը կարող է նրանց համահավասար բնակության վայրերում խնդիրներ հարուցել էթնիկ վրացիների համար» (տես http://www.vesti.az/news/135175):

Ի պատասխան Մամեդովը հնչեցնում է այսպիսի միտք. «Ադրբեջանցիներն աչքի են ընկնում կրոնա-բարոյական եւ ընտանեկան հատկանիշներով, որ թույլ են տալիս աճեցնել իրենց երկրի արժանի քաղաքացիների: Աբխազիայի ադրբեջանցիների համար կարեւոր է եղել մեր պապերի պատվիրանը՝ որդի ունենալ, տուն կառուցել, ծառ տնկել: Եթե ինչ-որ մեկին չի հաջողվում որդի ունենալ կամ տուն կառուցել, ապա դա չի նշանակում, թե մյուսներն էլ պիտի համահրեն ապագան եւ նույն կենսակերպն ունենան»:

Զեկույցի հեղինակներին մեղադրելով «ազգայնամոլության ձգտող» վերաբերմունքի մեջ, Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների առաջնորդներից մեկն, ըստ էության, Ադրբեջանի իշխանամետ լրատվամիջոցի օգնությամբ վրաց ժողովրդին համարում է «որդի ունենալու, տուն կառուցելու եւ ծառ տնկելու անընդունակ»: Տես էջ 2

Սիրիացի ապստամբները սպառնում են հայաբնակ Քեսաբին

Սիրիայի հարավում՝ Ջեբել Թուրքմեն լեռան շրջանում ապրում են արաբացած թուրքմեններ եւ երազում են վարչակարգի տապալման մասին, որին մեղադրում են սուննիների՝ իրենց դավանակիցների հալածման մեջ: Թուրք-սիրիական սահմանում տիրող լարվածությունը կարող է հանգեցնել Դամասկոսի եւ Անկարայի պատերազմին: Քանզի սահմանամերձ գոտում հաստատված ապստամբների վրա սիրիական բանակի արձակած որոշ արկեր ընկել եւ պայթել են Թուրքիայի տարածքում, հարուցելով թուրքական բանակի կտրուկ հակազդեցությունները:

Կառավարության եւ ընդդիմության հակամարտության սկզբնական շրջանում համեմատաբար խաղաղ Ջեբել Թուրքմենը աբխուժացավ այս տարվա հունիսին: Չորս օր տեւած մարտերից հետո տեղացի ապստամբները գրավեցին լեռան գլխավոր քաղաք Ռաբիեն: Նախորդ երկու ամիսներին թուրքմենները կառավարական ուժերից խլել էին շրջակա գյուղերը: Այդ մասին Le Monde թերթի թղթակցին պատմել է տեղացի աբխարհազորայիններից մեկը: Նա ավելացրել է, որ Ռաբիեի ազատագրման օրը բոլոր պաշտոնյաները հեռացել են այնտեղից: Դպրոցը փակ է, դիսպանսերը՝ նույնպես: Կառավարությունը դադարեցրել է աբխատավարձերի վճարումը: Մինչեւ սեպտեմբերի սկիզբը Ռաբիեն թիրախ էր կառավարական զորքերի թնդանոթների համար, որոնք տեղադրված էին Բուրջ Ալ-Քասսաբի բարձունքի վրա: Երբ ապստամբները գրավեցին այն, վսանգի աղբյուր դարձան բանակի ուղղաթիռները: Դրանք բնակիչների վրա նետում են ինքնաշեն ռումբեր, որոնք Սիրիայում ստացել են «տակառներ» անվանումը: Թուրքմեններից շատերը ռումբերից փրկվելու համար հատում են սահմանը եւ անցնում Թուրքիայի տարածք:

Ապստամբները ասիճանաբար մոտենում են ծովափնյա Լաթաքիա քաղաքին: Հոկտեմբերի կեսերից մարտեր են մղվում Բալողան լճի մոտակայքում: Սակայն նոր իրավիճակը կարող է գեղատեսիլ Ջեբել Թուրքմենը ներքաշել միջդավանանքային պատերազմի մեջ: Մի գյուղը կարող է դուրս գալ մյուսի դեմ: Թուրքմենները ամեն անգամ ալավիների գյուղեր մտնելիս զգուշանում են, որ հանկարծ որեւէ մեկին չվնասեն: Սակայն ալավիները նախընտրում են «փախչել Լաթաքիա եւ ապաստանել վարչակարգի գրկում»:

Վարչակարգը եւ ապստամբները միմյանց մեղադրում են այն բանում, որ ապստամբների ձեռքն անցնելուց հետո հրկիզվել է ալավիների Կինդեսիե գյուղը: Վարչակարգը փորձում է կանգնեցնել ապստամբների մուտքը ալավիների տարածքներ: Սակայն թուրքմենները մտադիր են «Թուրքիայի ալավիների հետ գործակցելով ձախողել Բաշար Ասադի ծրագիրը»:

Ցայսր հարավում ապստամբները պատրաստվում են հարձակվել Թուրքիայի սահմանակից, հայաբնակ Քեսաբ գյուղի վրա, որտեղ ապրում են նաեւ թուրքմեններ: Գյուղը դեռ սիրիական բանակի վերահսկողության տակ է: Թուրքմեն ապստամբները մտադիր են գյուղը գրավելով ծով դուրս գալ եւ ազատորեն հաղորդակցվել Թուրքիայի հետ, ծովով զենք ներկրել եւ այլն: «Ես Քեսաբի մեր հայ եղբայրներին նախազգուշացնում եմ, որ հեռանան նախքան ապստամբական բանակի հարձակումը, որպեսզի զերծ մնան քաղաքացիական անձանց կորուստներից եւ շարունակեն գանգատվել թուրքերի գործած ցեղասպանությունից», հայտարարել է թուրքմեն ապստամբը:

Ըստ Le Monde թերթի
Պատրաստեց Պ. Ք.

«Ազգ»-ը թեմային կանդրադառնա հետագայում:

Ռաֆֆին՝ նախագահի թեկնածու

«Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը երեկ ասուլիսում հայտարարեց, որ առաջիկա նախագահական ընտրություններին կառաջադրվի: Նա նշեց, որ ակնկալում է այն ուժերի եւ մարդկանց աջակցությունը, ովքեր գիտակցում են ազգային շահի իրացման, հետապնդման եւ հռչակման անհրաժեշտությունը շատ կարեւոր ժամանակահատվածում, եւ նրանց, ովքեր գիտակցում են, որ հայրենիքի ու հողի հետ արժեք է նաեւ մարդը:

Առաջադրվելու վերաբերյալ հայտարարությունից հետո Ռաֆֆի Հովհաննիսյանն ասաց, որ լրագրողներին հետաքրքրող հարցերին կպատասխանի նոյեմբերի 5-ին հրավիրվելիք ասուլիսում: Հ. Հ.

Վթարից վիրավորված զինծառայողների կյանքին վտանգ չի սպառնում

Կենտրոնական զինվորական հոսպիտալի նեյրովիրաբուժական բաժանմունքի պետ, բուժծառայության մայոր Արման Հակոբյանի հավաստիացմամբ՝ նախորդ օրը վթարի ենթարկված 15 զինծառայողների կյանքին վտանգ չի սպառնում: Հիվանդների մոտ առկա են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, պաթոլոգիաներ, գանգուղեղային վնասվածք: Հիշեցնենք, որ Քարվաճառի զորամասերից մեկին պատկանող «Ուրալ» ավտոմեքենան 19 պայմանագրային զինծառայողների տեղափոխելիս, հանդիպակաց ընթացող ավտոմեքենայի լույսերի արձակման պատճառով դուրս էր եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ գլորվել ձորը:

Վթարի հետեւանքով զոհվել են 4 զինծառայող՝ Արթուր Երեմյանը, Մանվել Ամիջանյանը, Սանասար Փիլոյանն ու Կամո Վարդանյանը:

Հ. Հ.

Ֆրանսիական հեռուստատեսությամբ հայկական խաչքարերի վերաբերյալ ֆիլմի ցուցադրություն

Նոյեմբերի 1-ին ֆրանսիական հեղինակավոր France 2 հեռուստաընկերությամբ Chrétiens Orienteaux (Արեւելյան քրիստոնյաներ) հաղորդաշարում եթեր արձակվեց հայկական խաչքարի, արվեստի եւ ավանդույթի մասին 2012թ. նկարահանված կեսժամանոց տեւողությամբ ֆիլմը «Հայկական խաչքարեր. հայ ժողովրդի հոգին եւ հոգեւորությունը (Les Khatchkars (Croix en Pierre) : L'Ame et la spiritualité du peuple arménien)»:

Հաղորդաշարի ինտերնետային կայքէջն է www.chretiensorientaux.eu:

Ֆիլմում արտացոլված են հայ ժողովրդի խաչքարագործության հին եւ հարուստ արվեստի ավանդույթները, խաչքարերի էությունը եւ դրանց նշանակությունը հայ քրիստոնյայի համար:

Նկարահանմանն իրենց մասնագիտական բացատրություններով աջակցել են նաեւ ֆրանսիացի հեղինակավոր գիտնականներ, պատմաբաններ ու արվեստագետներ: Ֆիլմում նաեւ դրվագներ կան խաչքարի պահպանմանն ուղղված կոչով՝ Նախիջեւանում Բաքվի կողմից հայկական խաչքարերի եւ գերեզմանոցների ավերման եւ ոչնչացման վերաբերյալ:

Ֆիլմը հնարավոր կլինի դիտել France 2 հեռուստաընկերության ինտերնետային կայքէջում:

France 2 հեռուստաընկերության (www.france2.fr) կողմից 2012 թ. ամռանը Հայաստանում նկարահանված ֆիլմերից ս.թ. դեկտեմբերի 30-ին Փարիզի ժամանակով 9.30-ին կցուցադրվի մեկ այլ ֆիլմ «Հայ եկեղեցու արմատները եւ պատմությունը սկզբնական դարերում» (L'histoire et les racines de l'Eglise Arménienne dans les premiers siècles.) վերնագրով ֆիլմը:

Ֆիլմերը ծրագրվել են Թոմա Վալյուի (Thomas Wallut) եւ Միշել Կարիեի (Michel Carrier) կողմից:

Բրիտանական կործանիչներ Իրանի «քթի տակ»

Բրիտանական «Ինդիփենդենտ» թերթը տեղեկացնում է, որ Մեծ Բրիտանիայի վարչապետ Ջեյմս Կեմերոնը ընդարկում է «Յուրոֆայթեր թայֆուն» կործանիչներ Պարսից ծոց ուղարկելու հնարավորությունը: Որոշում կընդունվի շաբաթվա ընթացքում՝ Դուբայում եւ Աբու-Դաբիում խորհրդակցություններ անցկացնելուց հետո:

Թերթի կարծիքով, Լոնդոնը պատրաստվում է Մերձավոր Արեւելքում իրավիճակի հնարավոր սրմանը եւ Իսրայել-Իրան առճակատման պայմաններում սեփական շահերի պաշտպանությանը:

Դատելով ըստ ամենայնի՝ բրիտանական կործանիչները կտեղաբաշխվեն «ՄԱԴ-Դաֆրա» ռազմակայանում՝ Աբու-Դաբիից 30 կմ հարավ: Դրանց գլխավոր խնդիրը կլինի թույլ չտալ իրանական ծովուժի կողմից Հորմուզի նեղուցի շրջափակումը:

Ներկայումս այդ ռազմակայանում ԱՄԷ-ի համաձայնությամբ տեղաբաշխված են ԱՄՆ-ի, ինչպես նաեւ ամերիկյան Patriot հակահրթիռային համալիրներ:

Միլիարդատիրոջ մոլորակը՝ Սաակաշվիլու «ավերակներով»

Երբ միլիարդատերն է հայտնվում երկրի ղեկին, նախկին չինովնիկների բախտը չի բերում, ավելին՝ մեծանում է տարբեր միջոցներով մի քանի միլիոն գողացած պաշտոնյաների հանդեպ հաշվեհարդարի հեռանկարը: Իսկ երբ միլիարդատերը փորձում է երկիրն էլ իր կարողության նման կարգավորել, կարելի է սպասել նոր հեղափոխության, որով երկրի ղեկը միլիարդատիրոջից հիմա էլ ուրիշները կխլեն:

Վրաստանի վարչապետ դարձած միլիարդատեր, «Վրացական երազանք» կուսակցության նախագահ Բիձինա Իվանիշվիլուն նշված հեղափոխությունը թերեւս չի սպառնում, քանի որ ինքն է հայտարարել, թե մեկուկես տարուց հեռանալու է: Իսկ որ Իվանիշվիլին լծվել է «մաքրազարդելու» գործին՝ սպասել չի տալիս թեկուզ այն մոտեցմամբ, որ նախորդ իշխանությունների գործերը քննելու նախաձեռնություններ են առաջ քաշվել:

Հիմա էլ, ըստ վրացական մամուլի, Բիձինա Իվանիշվիլին երկրի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն առաջարկել է Թբիլիսիի նորակառույց նստավայրից կրկին վերադառնալ հին նստավայրը, որտեղ հիմա Վրաստանի կառավարությունն ու վարչապետն են նստում: Իվանիշվիլին հայտարարել է, թե պետք է խնայել բյուջեի միջոցները, որպեսզի, օրինակ, էլեկտրականության համար նախագահի նստավայրը տարեկան 800.000 լարի (մոտ 500,000 դոլար) չվճարի: Ընդ որում, 2013-ից Վրաստանում, Սաակաշվիլու թեթեւ ձեռքով ու իրեն այդ պաշտոնում տեսնելու հույսով, ուժեղացված վարչապետի պաշտոնը ստանձնողն էլ պետք է տեղափոխվի նախագահական նստավայր, բայց վարչապետ Իվանիշվիլին չի էլ ցանկանում տեղափոխվել:

Սաակաշվիլիին սեփական ցանկությամբ կառուցված նստավայրից դուրս քշելով հանդերձ Իվանիշվիլին նաեւ կտրուկ քայլերի է գնում Ռուսաստանի հետ հարաբերություններում, թեեւ այդ հարաբերություններին առնչվող նախարարների մակարդակով հայտարարություններում դեռեւս արդիական ու գերակա է ներկայացվում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի հարցերի ի շահ Վրաստանի հանգուցալուծումը: Ամեն դեպքում, Վրաստանն արդեն իսկ Ռուսաստանի հարցով Վրաստանի վարչապետի հատուկ ներկայացուցիչ ունի ի դեմս 2000-2004 թթ. ՌԴ-ում Վրաստանի նախկին դեսպան Զուրաբ Աբաշիձեի:

Իվանիշվիլու՝ «ամենամեծ հարեւանի հետ հարաբերությունները կարգավորելու» անհրաժեշտության հետ մեկտեղ 2008-ի ռուս-վրացական պատերազմից հետո իրավիճակի կարգավորմանն ուղղված Ժնեւյան բանակցությունները եւս, ըստ վրացական իշխանությունների, շարունակվելու են: Սակայն Սաակաշվիլու որոշ մեկնարկած բանակցությունները շարունակելու պատրաստակամությունը Իվանիշվիլին համադրում է Վրաստանի նախագահի հաստատեցին մեղադրանքներով, թե հենց վերջինիս սադրանքն էր 2008-ի հարավօսական պատերազմի պատճառը, իսկ դրանից հետո էլ Սաակաշվիլին ոչ դիվանագիտորեն անընդհատ պիտակել է ռուսաստանյան պաշտոնյաներին:

Ու մինչ վրաց-ռուսական հարաբերությունների վերականգնման համատեքստում նշվում է Ժնեւյան բանակցությունները շարունակելու մոտեցումը, Իվանիշվիլին հայտարարել է նաեւ եկեղեցու միջոցով հարաբերություններ վերականգնելու հնարավորության մասին: Վրացի միլիարդատիրոջ ղեկավարած կառավարությունում էլ արդեն խոսում են վրաց-ռուսական երկաթուղու վերագործարկման մասին, որ անցնում է Աբխազիայով: Ընդ որում, երկաթուղու վերագործարկումը դիտարկվում է որպես աբխազական խնդրի լուծմանը նպաստելիք հանգամանք:

Սա էլ դեռ ամբողջը չէ. Իվանիշվիլու ղեկավարած կուսակցությամբ ստեղծված կոալիցիան բառացիորեն կարող է մեծանալ խորհրդարանում, որտեղ մեծամասնություն է կազմում, բայց ոչ սահմանադրական: Իսկ դա կարող է լինել Սաակաշվիլու նախկին կուսակիցների միջոցով, որոնցից ոմանք արդեն իսկ լքել են Վրաստանի նախագահի գլխավորած «Ազգային շարժումը» եւ անհրաժեշտ կլինեն «Վրացական երազանքին»՝ սահմանադրական մեծամասնություն ունենալու եւ, խորհրդարանում ուզածն անելու համար:

Խորհրդարանում Սաակաշվիլու համախոհների պակասելուն զուգընթաց Վրաստանում նաեւ գործընթաց է մեկնարկում, որի համաձայն երկրի նահանգապետերը կարող են հանվել նախագահի նշանակման տիրույթից ու մցվել վարչապետի «գրչի» տակ: Ու թերեւս այստեղ է, որ խորհրդարանում սահմանադրական մեծամասնություն ունենալով հարցը երկար չի ձգվի, այսինքն՝ խորհրդարանը կարող է ուղղակի հաստատել վրացական կառավարության ուզած նախագիծ:

Այս բոլոր գործընթացներով հանդերձ, որքան էլ թերի ու կոռումպացման ուղին բռնած լիներ Սաակաշվիլու կառավարությունը, օրինական հարց է առաջանում, թե ուր է երկիրը տանելու Բիձինա Իվանիշվիլին մեկուկես տարում, որ հետո էլ դեռ պատրաստվում է հեռանալ: Նախորդների բոլոր գործերն անխտիր աղբարկղ նետելու քաղաքականությունը, որքան էլ սարսափելի է, հիշեցնում է սովետների մոտեցումը, թե ամեն ինչ հիմից պետք է քանդել ու նորը կառուցել...

Լավ գիտենք, թե ուր տարավ այս մոտեցումը...

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Վրաց-ադրբեջանական հարաբերությունները արվո՞ւմ են

1-ին էջից

Այսինքն՝ «անաղագա ժողովուրդ»: Նրա մյուս մասերին արդեն կարելի է եւ ուշադրություն չդարձնել: Հիմնականն ասված է՝ որ «ադրբեջանցիները Վրաստանում աղրող ամենահաջողակ էթնիկ տարրն են, որի բարգավաճումը զեկույցի հեղինակները համարել են վրաց ժողովրդին սպառնացող վտանգ»:

Ընդ որում, ըստ Մամեդովի, հիշյալ զեկույցը «գրվել է նոր իշխանությունների համար»: Այսպիսով նա ակնարկում է, որ Իվանիշվիլիի կառավարությունը «փորձելու է ավելի սահմանափակել Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների սոցիալ-տնտեսական զարգացումը»: Որ Ադրբեջանում նույնպես անհանգստացած են Վրաստանի նոր կառավարության որդեգրելիք քաղաքականությամբ՝ փաստ է: Բավական շատերն էին անոնսավորել, որ վարչապետի պաշտոնը ստանձնելուց հետո Իվանիշվիլին «կայցելի Ադրբեջան»: Ինչպես տեսնում ենք, դա տեղի չի ունենում: Պե՞տք է ենթադրել, որ սեւեռվելով Վրաստանի էթնիկ ադրբեջանցիների խնդիրների վրա, պաշտոնական Բաքուն Իվանիշվիլիի կառավարությանը պարզապես ակնարկում է, թե «ռազմավարական դաշինքից շեղվելու դեպքում կարող է իրավիճակը սրվել ադրբեջանցիների համահավաք բնակության շրջաններում»: Ամենայն հավանականությամբ՝ այո: Ինչպիսի՞ն կլինի Իվանիշվիլիի կառավարության արձագանքը:

«Թուրան» գործակալությանը տված հարցազրույցում Վրաստանի հակամարտությունների կարգավորման հարցերով նորանշանակ նախարար Պասատ Զաքարեաշվիլին իրեն թույլ չի տվել ԼՂ հարցում խորհրդատու լինել՝ ասելով, որ իրենք նախընտրում են «խաղաղ կարգավորման ճանապարհը»՝ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի դեպքում: Սա ակնարկ չէ՞, որ վրաց-ադրբեջանական հարաբերությունները կարող են դուրս գալ «նույն ցավի գործընկերության» կաղապարից: Եվ որպեսզի դա տեղի չունենա, Բաքուն չպե՞տք է շեշտադրի Վրաստանի «բնակչության 15 տոկոսը կազմելու ներուժ ունեցող», ինչպես Էլբրուս Մամեդովն է ասում, էթնիկ ադրբեջանցիների գործոնը:

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ

Բուսակերությունը պարտադրանք չէ, սակայն առողջ ապրելակերպի գրավականներից է

Դալայ Լամա, Պլատոն, Պյութագորաս, Մահաթմա Գանդի, Բեռնարդ Շոու, Բայրոն, Աբրահամ Լինքոլն, Իսահակ Նյուտոն, Չարլզ Դարվին, Փոլ Մաքքարթնի - այս ու էլի տասնյակհազարավոր անձանց միավորում է մեկ փաստ՝ նրանք բուսակերներ են:

Բուսակերությունը գաղափարախոսություն է, ապրելակերպ, որ ժամանակի ընթացքում բազմաթիվ երկրներում վերածվել է պաշտամունքի: Հնդկաստանն ու Չինաստանը համարվում են այն երկրները, որոնք բուսակերության հիմքը դրեցին՝ 7-րդ դարում: Այդ երկրներում բուսակեր բնակչության թիվը հասնում է 45 տոկոսի: Իսրայելում բուսակերները «նոր»: Հին բուսակերները բացառում են սննդի մեջ կենդանական ծագման որեւէ բաղադրիչի օգտագործում, իսկ «նոր» բուսակերները օգտագործում են նաեւ կաթնամթերք եւ ձու, քանի որ դրանց ստացմամբ կենդանիների հանդեպ ֆիզիկական ոտնձգություն չի թույլատրվում:

Վերջերս շվեդական եւ գերմանական հեղինակավոր համալսարանները ապացուցել են, որ մարդու օրգանիզմին անհրաժեշտ 8 ամինաթթուները կան կանաչեղենում եւ բանջարեղենում, հետեւաբար, բուսակերության անցումը որեւէ սպառնալիք չի հարուցում առողջությանը:

ձուկը չեն համարում մսամթերք եւ շաբաթը գոնե 3 անգամ նախընտրում են ձկնեղենը: Ավստրալիայում եւ Բելգիայում բուսակերության պաշտամունքը հասել է այնտեղ, որ տարվա մեջ մեկ շաբաթ անցկացվում են բուսակերությանը նվիրված միջոցառումներ, հանդիպումներ, քննարկումներ:

Գոյություն ունի բուսակերների երկու շերտ, նրանց պայմանականորեն անվանում են «հին» եւ «նոր»:

70-ականներին ամերիկացի գիտնականներն ապացուցեցին, որ ալկոհոլիզմից ու ծխելուց հետո սննդի մեջ մսի օգտագործումը մահացության գլխավոր պատճառներից մեկն է: Հարվարդի համալսարանի գիտնականներն էլ նշում են, որ բուսակերների մեջ ավելի հազվադեպ են հանդիպում մրսածություն, ալերգիա եւ քաղցկեղ, քանի որ սննդակարգը թույլ է տալիս մարդկային օրգանիզմին ներդաշնակ կերպով մոտենալ բնությանն ու ապահովել առողջ նյութափոխանակություն:

Եթե ձեր սննդակարգում գերակշռի ոչ թե ճարպոտ միսը, այլ բանջարեղենը, ապա դուք կխուսափեք քաղցկեղային հիվանդություններից ու շաքարային դիաբետից: Սա գիտությունների ամերիկյան ակադեմիայի 1983-ին արված հետազոտության արդյունքն է: Ճարպակալում, բարձր ճնշում, սրտի անբավարարություն եւ կաթված: Բազմաթիվ գիտնական բժիշկներ հավաստիացնում են, որ բուսակերությամբ հնարավոր է խուսափել այս հիվանդություններից: Բժիշկների մյուս խումբն էլ, չմերժելով բուսակերությունը, խորհուրդ է տալիս՝ միս կերեք, բայց չափավոր:

Տես էջ 8

ՕԵԿ-ի խորհրդի նիստում

Երեկ երեկոյան տեղի է ունեցել «Օրինաց երկիր» կուսակցության քաղաքական խորհրդի հերթական նիստը՝ կուսակցության նախագահ Արթուր Բաղդասարյանի գլխավորությամբ:

Քաղխորհուրդը քննարկել է կուսակցության կազմակերպչական խնդիրներին վերաբերող հարցեր, ինչպես նաեւ որոշում է ընդունել «Օրինաց երկիր» կուսակցության 11-րդ արտահերթ համագումարն անցկացնել սույն թվականի դեկտեմբերի 22-ին:

ՕԵԿ նախագահ Արթուր Բաղդասարյանը քաղխորհրդին է ներկայացրել վերջերս Ռուսաստանի Դաշնություն եւ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն կատարած աշխատանքային այցերի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները, ընդգծել դրանց կարեւորությունը, ինչը լուրջ խթան կհանդիսանա Հայաստանի անվտանգության ամրապնդման, այդ երկրների հետ ռազմատեխնիկական եւ տնտեսական համագործակցության խորացման եւ զարգացման գործում:

Արթուր Բաղդասարյանը նաեւ տեղեկացրել է, որ ՉԺՀ-ում պաշտոնապես հայտարարվել է ՕԵԿ-ի եւ Չինաստանի կոմունիստական կուսակցության միջեւ միջկուսակցական համագործակցության մասին:

ՕԵԿ քաղխորհուրդը, ի թիվս այս հարցերի, քննարկել է ներքաղաքական, ինչպես նաեւ արտաքին քաղաքական խնդիրներին վերաբերող հարցեր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱԻԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 581841
060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

Հայկ Քոթանջյան. «Քաղաքագետները դեմ են ադրբեջանական պետության ղեկավարի վարած օտարատյաց քաղաքականությանը»

Հայաստանի քաղաքական գիտության ասոցիացիայի դիմումը հրապարակելու առաջարկությամբ հանդես է եկել նրա նախագահ, քաղաքական գիտությունների դոկտոր **Հայկ Քոթանջյանը**: Ստորև ներկայացնում ենք Դիմումի տեքստը:

ԴԻՄՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀԻՆ՝ ՂՈՒԲԱՅՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԹԱՂՈՒՄՆԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՆՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Վերջերս Բաքվի ՋԼՄ-ները տեղեկույթ են տարածում այն մասին, որ Ադրբեջանի հյուսիսում գտնվող Ղուբա քաղաքում՝ զանգվածային թաղումների վայրում, Հեյդար Ալիեւի հիմնադրամի նախաձեռնությամբ կառուցվում է ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիր: Հուշարձանի կառուցումն սկսվել է 2010 թ.՝ ըստ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի կարգադրության: Տվյալ փաստը դառնում է քաղաքական ձեռնածությունների առարկա, ձեռնածություններ, որոնք նպատակաուղղված են օտարատյացության ուժգնացմանը եւ հակահայկական տրամադրությունների տարածմանը: Ադրբեջանի նախագահի կողմից տվյալ թաղումների այցելությունները, որոնք ուղեկցվում են հայատյաց մեկնաբանություններով, հանգեցրին այն բանին, որ դրանք դառնում են արտասահմանյան պատվիրակությունների՝ պետական արարողակարգով նախատեսվող այցելության վայր: Միեւնույն ժամանակ, գերեզմանոցի ուսումնասիրությունների վերաբերյալ հաղորդվող տեղեկությունների հակասականության հետեւանքով թաղումների փաստն ինքնին ու դրանց նույնականացման օբյեկտիվությունը պահանջում են միջազգային գիտական փորձաքննություն: Թաղումների վերաբերյալ ակտիվորեն շրջանառվում է հարեւան երկրի իշխանությունների այն պաշտոնական վարկածը, թե մարդկային մնացորդները պատկանում են Ղուբայում ապրող հրեաների նկատմամբ իբր 1918 թ. հայերի կատարած եղեռնագործության զոհերին: Սակայն, ինչպես վկայում են Ռուսաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվում պահվող փաստաթղթերը, այդ ժամանակ հայերի եւ հրեաների միջեւ հարաբերությունները եղել են արտակարգ բարեկամական ու փոխվստահական. դեպքեր են եղել, երբ Ռուսական կայսրության սահմաններում հեռաղնդումներից խուսափելու համար հրեաները հայտնել են «հաստատուն ցանկություն՝ քրիստոնեությունն ընդունելու հայկական ծեսով», եւ այդպիսով նրանց մի մասը Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հովանու ներքո Ռուսաստանի տարածքում հալածանքներից պաշտպանության հետ մեկտեղ ստացել է նաեւ ծածուկ կերպով իր ինքնությունը պահպանելու հնարավորություն:

Հայերի նկատմամբ օտարատյացության «ղուբայական» ազդակը, որն ուղեկցվում է հակահայկական տրամադրությունների բորբոքման գործում հրեական Սփյուռքի ձեռնածական ներգրավման փորձերով, ինչպես վկայում են ադրբեջանական աղբյուրները, տրվել է հարեւան պետության ղեկավարի կողմից, որը, ցեղասպանության հուշահամալիրի ստեղծման վերաբերյալ կարգադրություն տալով, փաստորեն կանոնականացնում է Ադրբեջանի հյուսիսում պեղված գերեզմաններում թաղված մարդկանց զանգվածային ոչնչացման մեղավորների եւ նրանց ազգային-կրոնական պատկանելության մասին անստույգ վարկածը: Վերջերս ադրբեջանական ժողովրդի մեջ հակահայկական տրամադրությունների բորբոքման քաղաքականությունն ընդունում է ավելի ու ավելի բացահայտ ձեւեր, հատկապես՝ ՆԱՏՕ-ի ուսումնական ծրագրի շրջանակներում իր գործընկերոջը՝ նախկին հայ սպային սպանողի ցինիկ արդարացումից ու պարգեւատրումից հետո, որտեղ հարուցեցին մեծ թվով պետությունների եւ միջազգային կազմակերպությունների ղեկավարների վրդովմունքն ու պարսավանքը: Օտարատյացության քաղաքականությունը, որը հայ ժողովրդի նկատմամբ բացահայտ կերպով որդեգրել է ադրբեջանական պետության ղեկավարը՝ զուգակցելով համաշխարհային հայությանը հրապարակայնորեն Ադրբեջանի թշնամի հայտարարմամբ, չխորշելով ժողովուրդների, այդ թվում՝ հայերի եւ հրեաների միջեւ հարաբերությունների իրական պատմության նենգափոխումից, փորձում է միջազգային հանրությանը ներքաշել քաղաքական ձեռնածությունների ուղեծիր:

Ղուբայում զանգվածային թաղումների իսկությունը գիտականորեն ճշտելու նպատակով Ադրբեջանի ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Մահմուդ Քերիմովին նամակով դիմել է կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լեւոն Եփիսկոպոսյանը: Պրոֆեսոր Եփիսկոպոսյանը, լինելով Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի մարդու գենետիկայի խմբի գիտական ղեկավար եւ Հայկական մարդաբանական ընկերության նախագահ, առաջարկում է կատարել Ղուբայում հայտնաբերված մարդկային մնացորդների որակավոր միջազգային փորձաքննություն: Ցավոք, այդ նամակը դեռ պատասխան չի ստացել:

Ադրբեջանի Գիտությունների Ազգային ակադեմիայի նախագահին ուղղված դիմումի հարցում սատարելով գործընկերոջը՝ Հայաստանի քաղաքական գիտության ասոցիացիան իր պարտքն է համարում միջազգային հասարակայնությանը ամբողջությամբ ներկայացնել պրոֆեսոր Լեւոն Եփիսկոպոսյանի նամակը՝ միտված փաստերի օբյեկտիվ մասնագիտական ուսումնասիրությանը ճշմարտությունը պարզելու եւ Ղուբայում թաղումների օտարատյաց շահարկումները դադարեցնելու նպատակով:

ՊՐՈՖԵՍՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ Ս. ՔԵՐԻՄՈՎԻՆ (ոչ հեղինակային թարգմանություն).

«Երեւան

2012 թ. հունվարի 11

Ադրբեջանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ,

ակադեմիկոս Մ. Քերիմովին

Հարգելի պ-ն Քերիմով

Կրկին դիմում եմ Ձեզ խնդրանքով՝ ադրբեջանցի եւ հայ մասնագետների կողմից (նաեւ այլ երկրների փորձագետների հնարավոր ներգրավմամբ) համատեղ ուսումնասիրելու Ադրբեջանի հյուսիս-արեւմուտքում վերջերս հայտնաբերված զանգվածային թաղումներում եղած մարդկային մնացորդները:

Ես նկատի ունեմ 2007 թ. ապրիլին Ղուբա քաղաքում մարդկանց երկու գերեզմանահորերի հայտնաբերումը: Այդ ժամանակ Ադրբեջանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն պրոֆեսոր Մ. Ռահիմովան հայտնեց, որ «...մարդաբանական հետազոտություններով հաստատվել է, որ այդ մարդիկ մահմեդականներ են»: Իսկ 2007 թ. ապրիլի 18-ին Դուք հայտարարեցիք, որ հայտնաբերված մարդկային մնացորդների նախնական փորձաքննություն կանցկացնեն ադրբեջանցի գիտնականները: Դուք նաեւ նշեցիք, որ «Ղուբայում հայտնաբերված մարդկային մնացորդները կարող են լինել ինչպես մարդկանց զանգվածային ոչնչացման, այնպես էլ համաճարակի արդյունք»: Դա խիստ գիտական գնահատական էր՝ տրված մի պրոբլեմի, որի լուծումը պետք է հանձնարարվեր համապատասխան փորձագետների:

Ցավոք, սպասվող փորձաքննության արդյունքները, եթե այն իրոք կատարվել է, չեն հրապարակվել: Դրա փոխարեն ակադեմիական գիտությունից հեռու կանգնած մարդիկ ձեռնամուխ եղան այդ թեմայի քաղաքական շահարկմանը: Հայտնաբերված մնացորդները առանց որեւէ հիմքի վերագրվեցին Բաքվի խորհրդի, մասնավորապես՝ Համազասպի ջոկատի պատժիչ գործողությունների զոհերին, իսկ թաղումներն էլ, կախված իրավիճակից, ճանաչվեցին մեկ ադրբեջանական, մեկ հրեական, մեկ լեզգիական:

Այսօր հայտնաբերված թաղումների տեղ են բերում Ադրբեջանի հյուրերին, որոնց պատմում են ադրբեջանցիների նկատմամբ «հայերի վայրագությունների» մասին: 2009 թ. դեկտեմբերի 30-ին հրապարակվեց Ադրբեջանի Հանրապետության նախագահի հրամանագիրը՝ Ղուբայում Ցեղասպանության հուշահամալիրի կառուցման մասին: Պետության ղեկավարի այդ կարգադրությունը փաստորեն օրինականացրեց մարդկանց մահվան պատճառների քաղաքականապես «պատվիրված» վարկածը, որը չի ստուգվել անկախ մասնագետների կողմից եւ չի հաստատվել գիտական հետազոտություններով:

2010 թ. փետրվարի 10-ին ես դիմեցի Ձեզ եւ Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրենին՝ առաջարկելով թույլ տալ մեր մասնագետներին մասնակցել Ղուբայում հայտնաբերված մարդկային մնացորդների մարդաբանական եւ գենետիկական համատեղ փորձաքննությանը: Ցավոք, նամակը մնաց անպատասխան:

Բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Ղուբայում հայտնաբերված մարդկային մնացորդների փորձաքննություն առ այսօր կամ չի կատարվել, կամ դրա արդյունքները չեն հրապարակվել: Հաշվի առնելով այդ պրոբլեմի հետագա քաղաքականացման հանգամանքը՝ ես կրկին դիմում եմ Ձեզ անդրդվելի խնդրանքով՝ թույլ տալ աշխարհի առաջատար լաբորատորիաներում աշխատանքի մեծ փորձ ունեցող մեր մասնագետներին՝ մարդաբաններին եւ ծագումնաբաններին, մասնակցել Ղուբայում հայտնաբերված թաղումների փորձաքննությանը: Հավատացած եմ, որ համատեղ անկողմնակալ գիտական հետազոտության արդյունքներով (ինչպիսին էլ որ դրանք լինեն) կպարզվեն գրեթե հարյուր տարի առաջ տեղի ունեցած մարդկանց զանգվածային ողբերգական մահացության իրական պատճառները եւ հանգամանքները:

Հարգանքով՝

Լեւոն Եփիսկոպոսյան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Մոլեկուլյար կենսաբանության ինստիտուտի մարդու գենետիկայի խմբի գիտական ղեկավար, Հայկական մարդաբանական ընկերության նախագահ»

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Կանգառը քաղաքապետարանի՞, թե՞ աղօրինաշինության միջոցով

Վերջին շրջանում որոշակիորեն բարեկարգվող մեր մայրաքաղաքի Ռուբինյանց փողոցի՝ նկարում պատկերված հատվածի հազիվ 5-6 մետր ընդգրկող տեսքը տարօրինակ կարելի է համարել: Փողոցի Դավիթ Անհաղթի քանդակից մինչեւ «Ալմաս» գործարան ձգվող հատվածում հիմնականում կանաչ գոտիներ են, ցայտաղբյուրներ, բարեկարգ մայթեր: Բացառությամբ այս փոքրիկ կտորի, որը, ինչքան էլ արտառոց է, տրանսպորտային բազմամարդ կանգառ է: Փողոցի այս մասը իր նոր կարգավիճակը ստացավ մոտ 2 ամիս առաջ՝ հարեւանությամբ գտնվող «Երեւան սիթի»-ից տեղափոխվելով մոտ 50 մետր վերեւ: Եվ...

Եվ պարզվեց, որ կանգառի տեղը փոխողները, որի վերաբերյալ որոշում դեռ 2010 թ. է ընդունվել, հաշվի չեն առել հազարավոր ուղեւորների թե՛ մայրաքաղաքային, թե՛ պարզ մարդկային պահանջը, որպիսին վայելում են հարյուր հազարավոր երեւանցիներ. այն է՝ փոխադրամիջոցի սպասել հարմարավետ տարածքում, մասամբ պաշտպանված լինելով արեւի ու անձրեւի, քամու ու ձյան անհարմարություններից: Ուղեւորներից առավել ակտիվները, որոնք համոզված էին, որ եղանակային բարենպաստ օրերից հետո սկսվելու են անձրեւն ու ձյունը, սուր քամիները, խմբակային նամակ են հասցեագրել քաղաքապետարան, որտեղից տրանսպորտային վարչության պետից ստացված պատասխանն ուղղակի արտառոց է. միջոցների սղության պատճառով կանգառը չի բարեկարգ-

վի: Այդ դեպքում բարի եղեք եւ կանգառը ժամանակավորապես հետ տեղափոխեք, ուր ուղեւորները պաշտպանված են սուղերմարկետի ընդարձակ մուտքի շնորհիվ: Այլապես խնդրի այսօրինակ լուծումը, որը հիմնավոր անհարմարություններ է ստեղծել հազարավոր քաղաքացիների համար, ոչնչով արդարացված չէ:

Այստեղով երթեւեկողները երկրորդ տարբերակ են համարում մոտակայքում գտնվող գործարարների կամ իրենց ԱԺ պատգամավորի կողմից խնդրի լուծումը: Հատկապես վերջինս մայիսյան խորհրդարանական ընտրությունների նախօրեին որոշ բարեկարգման աշխատանքներ նախաձեռնեց, երբ կանգառի խնդիրը չկար: Այնպես որ հիմա լավագույնս կարելի է ապացուցել, որ գարնանն արվածը նախընտրական նպատակ չէր հետապնդում, այլ ուներ մեր մարդկանց օգտակար լինելու պարզ ցանկություն:

Կան նաեւ հանգանակություն կատարելու, սեփական ուժերով աշխատանքներ իրականացնելու եւ ինչ-որ ծածկ տեղադրելու առաջարկներ, որոնք կարող են ինքնագործունեություն կամ աղօրինաշինություն որակվել եւ անցանկալի հետեւանքների հանգեցնել: Այնպես որ Երեւանի քաղաքապետարանն այս հատվածում բնակվող իր մի քանի հազար քաղաքացիների հերթական համակրանքին կարժանանա, եթե մինչ հորդ անձրեւներն ու ձյան տեղումները բարեկարգի կանգառը: Այլապես մարդկանց մեջ կամրապնդվի այն տրամադրությունը, որ այս փոքրիկ հողակտորն էլ իրոք ինչ-որ մեկի սեփականությունն է, որի շահերից ելնելով կանգառը երրորդ տարում է տեղափոխվել, այն էլ՝ այս վիճակով:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

Պարզաբանում է Մանկավարժականը

«Սիվիլիթաս» հիմնադրամի հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը, բացարձակ սուտ է եւ կեղծիք:

Մանկավարժական համալսարանը բանասիրական գիտությունների թեկնածու Լիլիկ Ստեփանյանի հետ համագործակցությունը միշտ բարձր է գնահատել, եւ համալսարանում նրա ժամանակավոր չաշխատելու հանգամանքը պայմանավորված է եղել դասաժամերի սակավությամբ: Ստեփանյանի ղեկավարած կուրսը 2010-2011 ուսումնական տարում ավարտել է համալսարանը: Առաջին կիսամյակի դասաբաշխումը համալսարանում կատարվում է օգոստոս ամսին, իսկ ինչպես հայտնի է, օգոստոսին դեռ «Սիվիլիթաս» հիմնադրամը առանձնապես մեծ հետաքրքրություն չէր ներկայացնում հանրության համար: Ի դեպ, բուհի ղեկավարությունը միայն հայտարարությունից հետո է պարզել, որ Լիլիկ Ստեփանյանն ինչ-որ կերպ կապված է այդ հիմնադրամի հետ:

Տեղեկացնենք, որ Լիլիկ Ստեփանյանը դեռ սեպտեմբերին տեղեկացված է եղել, որ իր հետ պայմանագիր չի կնքվում դասաժամերի քանակի պատճառով, բայց նաեւ նրան խոստացվել է խնդիրը լուծել նոյեմբեր ամսին: Նոյեմբեր ամսից Լիլիկ Ստեփանյանը մանկավարժական գործունեությունը շարունակում է համալսարանում: Իսկ «Սիվիլիթասի» հայտարարությունը եւս մեկ անգամ վկայում է այդ կազմակերպության՝ ամեն ինչ քաղաքականացնելու նպատակների մասին:

Հիշեցնենք, որ «Սիվիլիթաս» հիմնադրամը տարածել է հայտարարություն, որում մասնավորապես մեղադրել է Մանկավարժական համալսարանին՝ իր աշխատակցի նկատմամբ խտրական վերաբերմունք ցուցաբերելու եւ հետապնդելու մեջ:

Հոբելյան

ՍԴՀԿ-ի 125-ամեակի գիտաժողովը Լոս Անջելոսի մեջ

Մեր գաղութի պատմութեան մէջ յիշարժան եւ անմոռանալի թուական մը պիտի մնայ 27 հոկտեմբեր, 2012-ը, քանի որ այդ օր տեղի ունեցաւ Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան հիմնադրութեան 125-ամեակին նուիրուած գիտաժողով մը (սեմինար) Բըրբէնքի Ուիդբըրի համալսարանի «Ֆլեչըր Զոնգ» հանդիսասրահին մէջ, առաւօտեան ժամը 9-էն մինչեւ կ.ե. ժամը 5:

Արդարեւ, գիտաժողովի կազմակերպիչները («Նոր սերունդ» մշակութային միութիւն եւ Հայկական կրթական բարեսիրական միութիւն), ոչ մէկ ճիգ չէին խնայած ակադեմական ամենաբարձր մակարդակով նշելու այս պատմական եզակի իրադրութիւնը:

Սեմինարի մասնակիցները, շուրջ 200 հոգի, նախասրահին մէջ ցուցադրուած ցուցանակներու միջոցով ծանօթացան ՍԴՀԿ-ի տարբեր ժամանակաշրջաններու գործունէութեանց լուսանկարներուն եւ այլ ծանօթագրութեանց:

125-ամեակի գիտաժողովին նուիրուած բարձրորակ խնամքով պատրաստուած յայտագիր-գրքոյկ մը բաժնուեցաւ հանդիսականներուն:

Սրահէն ներս իրենց ներկայութեամբ աչքի կը զարնէին Արեւմտեան թեմի առաջնորդ Յովնան արք. Տէրտէրեան, Հայ աւետ. եկեղեցիներու տնօրէն վեր. Զօ Մաթոսեան, Հայաստանի աւագ հիւպատոս տիար Գրիգոր Յովհաննիսեան եւ իր խորհրդականը՝ Արսակ Գալստեան, Արեւմտեան թեմի նախկին առաջնորդ Վաչէ արք. Յովսէփեան, Սան Տիեկոյի Հայց. եկեղեցւոյ հովիւ Տաթեւ Աւ. Քհնյ. Թաթուլեան, Հարաւային Գալիֆորնիոյ համալսարաններու դասախօսներ, ՍԴՀԿ-ի ղեկավարներ, ինչպէս նաեւ տարբեր կազմակերպութեանց, մամուլի եւ մտաւորականութեան ներկայացուցիչներ:

Սեմինարի կազմակերպիչ յանձնախումբի անունով ելոյթ ունեցաւ «Նոր սերունդ» մշակ. միութեան ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան եւ նախօրեան իր բացման խօսքը՝ հրաւիրեց ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգանքի տուրք մատուցանել ի յիշատակ հոկտ. 27, 1999-ի զոհերուն եւ իրենց կեանքը հայ ժողովուրդին նուիրաբերած նուիրեալներուն: Ապա՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով անդրադառնալէ ետք 125 տարիներու Հնչակեան կուսակցութեան գործունէութեան, նշեց հետեւեալը. «Եթէ այս գիտաժողովը նպաստէ երկարամեայ հայ կազմակերպութեան մը տարիներու գործունէութեան ընդմէջէն մեր մէջ զօրացնելու մեր հայկական էութեան գիտակցութեան սաղմը, մենք մեծապէս գոհացած պիտի ըլլանք անոր արդիւնքէն»:

Գիտաժողովի բացումին ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Արեւմտեան թեմի առաջնորդ Տ. Յովնան արք. Տէրտէրեան: Ան բարձր գնահատեց Մայր կուսակցութեան հիմնադիրներու հայրենիքին ծառայելու տեսիլքն ու ուժականութիւնը: «Անոնց յիշատակը թող միշտ պայծառ մնայ եւ թող այս իրադրութիւնը նոր աւիւն մը դառնայ նոր սերունդին եւ գեղեցիկ ընծայումն ըլլայ անոնց պայծառ յիշատակին»:

Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ նաեւ Ուիդբըրի համալսարանի տնօրէն՝ դոկտ. Դան Սենթ Քլէր եւ նախագահի անունով շնորհաւորեց ՍԴՀԿ-ի 125-ամեակը: Ան յայտնեց, թէ իրենց համալսարանն ու Հնչակեան կուսակցութիւնը գրեթէ նոյն տարիքն ունին եւ ուրախութեամբ ընդգծեց, որ համալսարանի ուսանողութեան խսան առ հարիւրը հայերէ կը բաղկանայ:

Այստեղ կ'ուզենք նշել որ սոյն գիտաժողովի հովանաւորներն էին UCLA համալսարանի Ռիչըրդ Յովհաննիսեանի անուան ժամանակակից Հայոց պատմութեան ամբիոնը, Ուիդբըրի համալսարանը, Միշիկըն համալսարանի Հայկական հետազօտական կեդրոնը եւ Հայկական ուսումնասիրութիւններու եւ Հետազօտութեանց ազգային ընկերակցութիւնը:

Գիտաժողովը ամբողջովին համակարգչային արդի մեթոտներով եւ արբանեակային հեռաստիրումով, մատչելի դարձաւ աշխարհի չորս ծագերուն, sdhp125.org հասցէով:

Առաջին նստաշրջանի համադրողն էր փրոֆ. Սեթուհ Ասլանեան: Ելոյթ ունեցան հետեւեալները.

Փրոֆ. Հրաչ Չիլինկիրեան (Լոնտոնէն-ուղղակի եթերով) նիւթ՝ «Կայսրութիւններու անկումէն մինչեւ համաշխարհայնացման դարը. հայկական քաղաքական գաղափարախօսութեան եւ ռազմավարութեան խնդիրներ եւ հարցադրումներ:

Դոկտ. Աբել Ք. Մանուկեան՝ «Ժընեւ եւ Հնչակեան կուսակցութեան ստեղծումը»:

Փրոֆ. Ժիրայր Լիպարիտեան՝ «Սոցիալ-դեմոկրաս Հնչակեան կուսակցութեան ակունքներուն մօտ. խնդիրներ եւ յարակարծիքներ»:

Երկրորդ նստաշրջանի համադրողն է փրոֆ. Հուրի Պէրպէրեան: Խօսք առին հետեւեալները.

Փրոֆ. Վահրամ Շամմասեան՝ նիւթ՝ «Բացարձակ մենաշիրութիւն-Հնչակեան հեղափոխական դրուագը 1890-ականներու հայկական Մուսա Լեռի մէջ»:

Դոկտ. Կարապետ Մոմճեան՝ «1895-1914 Հայկական յեղափոխական եւ քաղաքական կազմակերպութիւններու յարաբերութիւնները երիտասարդ թուրքերու հետ»:

Փրոֆ. Գէորգ Պարսագճեան՝ «Գաղափարաբանութիւն եւ գրականութիւն. մայր կուսակցութիւնը եւ անոր մտաւորական զաւակները»:

Ճաշի դադարէն ետք տեղի ունեցաւ երրորդ նստաշրջանը: Համակարգող՝ փրոֆ. Արա Սանճեան: Զեկոյց տուին հետեւեալները.

Փրոֆ. Ռիչըրդ Յովհաննիսեան, նիւթ՝ «Հնչակեան կուսակցութիւնը եւ Հայաստանի Առաջին Հանրապետութիւնը»:

Պրն. Արամ Արքուն՝ «Համաշխարհային Առաջին պատերազմէն ետք Հնչակեան կուսակցութեան դերը Կիլիկիոյ մէջ»:

Փրոֆ. Արա Տօսթուրեան՝. «ՍԴՀԿ-ի աշխատաւորական եւ քաղաքական գործունէութիւնը ԱՄՆ-ի արեւելեան շրջանին մէջ, Հնչակեան համաշխարհային պարունակին մէջ (1890-2000)»:

Յետմիջօրէի դադարէն ետք չորրորդ նստաշրջանի համակարգողն էր փրոֆ. Ժիրայր Լիպարիտեան: Խօսք առին.

Դոկտ. Վարդան Մարտիրոսեան՝ «Հարաւային Ամերիկայի հայկական գաղութներու մէջ Հնչակեան կուսակցութեան գործունէութիւնը. սկզբնական շրջանի ուրուագիծ մը»:

Փրոֆ. Արա Սանճեան՝ «Խրուշչեւը, Ղարաբաղն ու հնչակեանները. փաստագրական ուղեւորութիւն մը բանաւոր պատմութեան աշխարհի յառաջխաղացքին մէջ»:

Արդարեւ, վերոյիշեալ, ականաւոր պատմաբանները եւ ակադեմականները՝ իրենց վերլուծումներով եւ քննարկումներով ՍԴՀԿ-ի դրիսմակի ընդմէջէն անդրադարձան անցնող 125 տարիներու հայ ժողովուրդի պատմութեան զանազան երեսներուն: Իւրաքանչիւր նստաշրջանի աւարտին՝ ներկաները իրենց շահեկան հարցումներով յաւելեալ լուսաբանութիւններ ստացան արծարծուած նիւթերուն շուրջ:

Գիտաժողովի աւարտին փակման խօսքը կատարեց ՍԴՀԿ Կեդր. վարչութեան անդամ տօքթ. Համբիկ Սարաֆեան: Ան մասնաւորապէս նշեց, որ կուսակցութիւններու գոյութիւնն անժխտելի է մեր հայ իրականութեան մէջ: Անոնք են, որ պայքարեցան եւ ազատ անկախ հայրենիք մը ունենալու գաղափարը իրականացուցին: Եթէ ոչինչ ընէիք Թուրքիոյ մէջ, այսօր անհայրենիք պիտի մնայիք այլ ազգերու նման: Որպէս փոքր ժողովուրդ այն իրագործումները որ ցարդ կատարուած են՝ հպարտացուցիչ են եւ աղբեցուցիչ: Իր ելոյթի աւարտին ան կոչ ուղղեց հայրենիքի աւանդական կուսակցութիւններու, վերադառնալ իրենց արմատներուն, քաղաքական եւ գաղափարական շինիչ վերլուծութիւններով իրենց նպաստը բերեն բարգաւաճ եւ կենսունակ հայրենիքի մը ստեղծումին:

Խօսք առաւ նաեւ գերբ. Վաչէ Սրբազան եւ իր երախտագիտութիւնը յայտնեց այս ակադեմական բարձրորակ միջոցառումին համար: Մաղթեց, որ յառաջիկայ տարիներուն եւս նման հանդիպումներ ըլլան քննարկելու համար մեր եկեղեցին ու նոր սերունդը դիմակայող հարցերը:

Ուշ երեկոյեան, Գլենդէյլի «Ֆենիշիա՝ ճաշարանին մէջ, գիտաժողովի կազմակերպիչ յանձնախումբը ճաշկերոյթով մը պատուեց տարբեր շրջաններէ ժամանած հիւր դասախօսներն ու գիտնականները:

Այստեղ շնորհակալական խօսքերով հանդէս եկան Լոս Անջելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս պրն. Գրիգոր Յովհաննիսեան, ՍԴՀԿ Կեդր. վարչութեան անդամ՝ տօքթ. Համբիկ Սարաֆեան եւ ՆՍՄՄ-ի ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան: Անոնք շնորհաւորելով այս գիտական բարձրորակ սեմինարի բոլոր մասնակիցներն ու կազմակերպիչները՝ մաղթեցին նորանոր յաջողութիւններ իրենց յետագայ աշխատանքներուն:

Մոսկվյան ոստիկանության գեղարվեստական մրցանակը՝ մեր հայրենակցին

Մի քանի տարի առաջ Երեւանում լույս տեսավ մոսկվացի պատշտոնաթող գնդապետ Գառնիկ Ոսկանյանի «Մոսկվյան քրեամարտերում» գիրքը՝ ձեր համեստ ծառայի խմբագրությամբ: Պրոֆեսիոնալ միլիցիոների այս պատմվածաշարում շեշտը չէր դրվել գեղարվեստական կողմի վրա, այլ վավերականորեն վերարտադրվել էին հախուռն 90-ական թվականներին Մոսկվայում ծավալված քրեական դաժան իրադարձությունները, որոնց անմիջական մասնակիցն է եղել գնդապետ Ոսկանյանը: Նրա ղեկավարությամբ բացահայտված շատ հանցագործություններ արդեն այն տարիներին հասարակական լայն արձագանք գտան՝ դրանց մասշտաբայնության բերումով. հենց միայն նրա «զոհերի» շարքն են դասվել հարյուրավոր հանցագործներ, այդ թվում՝ չորս տասնյակից ավելի այսպես կոչված օրենքով գողեր: Նրանց դեմ պայքարի առանձին իրական դրվագների մասին են պատմությունները:

Ահա եւ գիրքը մասնակի լրացումներով թարգմանաբար հրատարակվեց նաեւ Մոսկվայում՝ ռուսերեն, եւ անսպասելիորեն հրատապ հնչեղություն ստացավ: Բանն այն է, որ Ոսկանյանը ՌԴ ՆԳՆ համակարգում երկար տարիներ ղեկավարել է պատշտոնների աշխատել է էթնիկական հանցավորության դեմ պայքարի խիստ յուրահատուկ ասպարեզում, երբ կազմակերպված հանցախմբերը ձեւավորվում են մեկ ազգային հանրության հիման վրա, օտար երկրում ձեռնարկվող իրենց հանցավոր գործողություններում՝ ի շահ իրենց օգտագործելով ծագման, լեզվի, սովորույթների, կենսակերպի միասնությունը:

Տվյալ դեպքում գործելով Մոսկվայի իրենց այնքան «հարազատ» ազգային միջավայրում, նրանք հեշտությամբ անհրաժեշտ տեղեկություններ են հայթայթում հնարավոր զոհերի մասին ու նենգորեն օգտագործում են դրանք: Էթնիկական հանցախմբերի շատ անդամներ իրար լավ ճանաչելով տակավին «պատմական» հայրենիքից, իրենց համախմբվածությամբ ու դրա շնորհիվ նվազ խոցելիությամբ դառնում են շատ ավելի ինքնավստահ, հանդուգն ու դաժան: Ցինիկորեն ներխուժելով հատկապես հայրենակիցների բիզնեսի մեջ, նրանք կիրառում են շանտաժ, սպառնալիքներ, սպանություններ, հարազատների առեւանգումներ եւ շատ այլ հանցագործություններ:

Ոսկանյանը, նկատի ունենալով կովկասյան (այդ թվում նաեւ հայկական) էթնիկական հանցախմբերի առկայությունը Ռուսաստանում՝ Մոսկվայում, գրքում իր քաղաքացիական համոզված դիրքորոշմամբ զգուշացնում է, որ այդ երկրում ստեղծված հակակովկասյան տրամադրությունները էապես պայմանավորված են նաեւ հյուրընկալության կանոնների խախտումներով, երբ, պատկերավոր ասած, մտնելով հյուրընկալողի տուն, եկվորը ոտքերը դնում է սեղանին:

Վերջին իրադարձությունները, երբ հյուսիսկովկասցիները զանգվածային անկարգություններ հրահրեցին Մանեժնայա հրապարակում, երբ աշխարհի չեմպիոն «սեւաթույր» մարզիկը բռունցքի մի հարվածով մահվան դուռը հասցրեց ռուս անմեղ պատանուն, երբ դաղստանցի հարսանեկավորները կրակոցների «հրավառություն» սարքեցին Կրեմլի հարեւանությամբ եւ այլն, այժմեական են դարձնում Ոսկանյանի զգուշացումները: Ժամանակին նա ինքը շատ անողոք էր հենց հայազգի հանցագործների նկատմամբ, որոնց ոճրագործություններից գերազանցապես տուժում էր Մոսկվայի հայ հանրությունը՝ նրա գործարար խավը, խաթարվում էր հայության պատիվը: Հատկանշական են Ռուսաստանի մի շարք ազգային կազմակերպությունների լիդերների վերջին հայտարարությունները, որոնցով սխալ է համարվում այն քաղաքականությունը, երբ աչքաթող են արվում կամ, ավելի վատ, պաշտպանության տակ են առնվում հայրենակիցների «անհարկի» արարքներն ու գործողությունները:

Իսկ հիմա մի փոքր տեղ տանք լիրիկային: Մոսկվայի ներքին գործերի գլխավոր վարչությունը 1993 թվականից մրցանակներ է սահմանել գրականության, արվեստի, բարեգործության ասպարեզների այն լավագույն ստեղծագործությունների ու նախագծերի համար, որոնցում քարոզվում է մայրաքաղաքի ոստիկանության աշխատակիցների ծառայողական բազմաբարդ աշխատանքը: Բավականությամբ հաղորդում ենք, որ «Գեղարվեստական գրականություն եւ դրամատուրգիա» անվանակարգով հերթական մրցանակը շնորհվեց Գառնիկ Ոսկանյանին՝ նշյալ «Մոսկովյան քրեամարտերում» գրքի համար:

Մրցանակը նրան հանձնեց ՌԴ ՆԳՆ-ի ներկայիս նախարար, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Կոլոկոլցեւը, որի հետ, ի դեպ, Ոսկանյանը ժամանակին ակտիվորեն զինակցել է կազմակերպված հանցավորության դեմ Մոսկվայում մղված ահեղ քրեամարտերում:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հ. Գ. - Գրքում տեղ են գտել նաեւ Ոսկանյանի՝ «**Ազգ**» օրաթերթում տպագրված հարցազրույցները:

Թուրքիան սայթաքում է Դամասկոսի ճանապարհին

Ստորեւ թարգմանաբար «Ֆայնենշըլ թայմս» թերթի հոկտեմբերի 25-ի համարում տպագրված Ֆիլիպ Սթիվենսի հոդվածը վերնագրյալ խորագրով:

Բացի արեւմուտքի խնդիրներից՝ մնացյալներն էլ խնդիրներ ունեն: Վերցնենք, օրինակ, Թուրքիան, որ մի քանի տասնյակ տարի առաջ օսմանյան գարուն էր նախատեսում: Այժմ, հոգնած ու ձանձրացած Եվրոպայի մերժումներից, նա որոշել է առիթը բաց չթողնել արեւելքում: Տնտեսությունը բարգավաճում էր եւ հին թշնամիներից նա կարողացել էր ընկերներ ձեռք բերել: Արաբ բռնակալների անկումով եւ Մ. Նահանգների իշխանության նվազումով Մերձավոր Արեւելքը խոստանում էր ինքնուրույն լուծել իր խնդիրները, եւ ինչը՞ կամ ո՞ր երկիրը կարող էր ավելի լավ ու տիպար-օրինակ ծառայել, քան Թուրքիան այդ նորաթուխ արաբական ժողովրդավարությունների համար:

Ստամբուլը դեռեւս առաջ է գնում աճող տնտեսության (եթե նույնիսկ տեմպերը նվազել են զգալիորեն) քանային էներգիայի շնորհիվ: Ռեջեփ Թայիփ Էրդողանի կուսակցության իսլամիստական կառավարությանը չի սպառնում որեւէ լուրջ քաղաքական ընդդիմություն: Այդ կուսակցությունը դաշնակիցներ ունի «Մահմեդական եղբայրներ» շարժման մեջ Եգիպտոսում եւ այլուր: Այս բոլորին գումարած՝ Էրդողանն ունի նաեւ անձնական դրդապատճառներ. նա մտադիր է վարչապետությունից անցնել նախագահական գերհագեցած պարտականությունների կատարմանը:

Բայց թուրք առաջնորդը այնուամենայնիվ սահմանն անցնում է: Երկրի ներսում անհանդուրժողականությունը այլախոհների նկատմամբ աճում է. կառավարությունը հետապնդում եւ հաճախ բանտարկում է մամուլում եւ այլուր քննադատաբար հանդես եկողներին: Պրն Էրդողանի աճող ինքնավստահությունը ձեռք է բերել որոշակիորեն ավտորիտար սահմաններ: Երկրից դուրս՝ տարածաշրջանում ղեկավար դերի ձգտումը հանգեցրել է լուրջ իրադարձությունների:

Ոչ վաղ անցյալում Անկարան շեփորահարում էր «հարեւանների հետ խնդիրներ չունենալու» արտահին քաղաքականությունը: Թուրքիան պիտի լիներ բոլորի եւ յուրաքանչյուրի ուժեղ եւ վստահելի գործընկերը:

Այժմ նա իրեն պատերազմի եզրին է զգում Բաշար ալ Ասադի սիրիական կառավարության հետ եւ չափազանց անհամերաշխ է ինչպես Իրանի եւ Իրաքի, այնպես էլ Ռուսաստանի հետ:

Սիրիան դավանանքային հակամարտության թատերաբեմ է դարձել: Մասնատված ընդդիմությունն իր սունի պաշտպաններն ունի Թուրքիայում, Սաուդյան Արաբիայում, Հորդանանում եւ Ծոցի երկրներում: Նրան նաեւ լայնորեն աջակցում է Արեւմուտքը: Ասադի ալավիների իշխանությանը նեցուկ են կանգնում Իրանի եւ Իրաքի շիա մահմեդականները: Նաեւ Ռուսաստանը, ՄԱԿ-ում որոշումների վրա ազդելու իր լիազորություններով:

Լիբանանը դարձյալ խրվել է դավանանքային հորձանուտի մեջ: Քաթարն ու Սաուդյան Արաբիան Թուրքիայի միջոցով զենք են մատակարարում Սիրիայի ապստամբներին: Դամասկոսն իր հերթին փոխադարձում է՝ պաշտպանելով քուրդ անջատողականներին, որոնք Անկարայի դեմ են դուրս գալիս: Խնդիրն ավելի է բարդանում այն պատճառով, որ Թուրքիայի շիա փոքրամասնությունից շատերը կարեկցանք են տածում սիրիացի ալավիների նկատմամբ:

Իհարկե, այդ խառնաշփոթի համար Էրդողանին մեղադրել չի կարելի: Թունիսում, Լիբիայում եւ Եգիպտոսում ժողովրդական ապստամբություններից հետո Թուրքիան չէր կարող վայրագ ճնշումներ բանեցնող որեւէ բռնակալի պաշտպանել: Որոշ ժամանակ առաջ Ասադը հետ էր կանգնել ժողովրդավարական բարեփոխումներ կատարելու Էրդողանին տված իր խոստումից: Նա նախընտրում է հրեանային կրակոցներ տեղացնել Սիրիայի քաղաքացիների դեմ: Թուրքիան, համենայն դեպս, սխալ հաշվարկ էր կատարել: Էրդողանի կուսակցությունը դանդաղել էր թիկունք կանգնել Լիբիայում Քադդաֆիի դեմ դուրս եկած ապստամբներին, եւ Էրդողանը չէր ցանկանում նույն սխալը կրկնել, երբ ցուցարարները փողոց դուրս եկան Սիրիայում: Նա որոշեց շուտափույթ վերջ դնել Դամասկոսի իշխանությանը՝ առանց հաշվի առնելու իր հնարավորությունները: Նա թերագնահատեց ասադամետ ուժերի ճկունությունը եւ միեւնույն ժամանակ գերագնահատեց բռնի ուժով նրան գահընկեց անելու Մ. Նահանգների ցանկությունը:

Թուրքական հռետորությունը դեռ շարունակում է առաջ անցնել տեղի ունեցող զարգացումներից: Արեւմտյան պաշտոնյաները գտնում են, որ Սիրիայի առաջնորդը իր հրամանատարության ներքո ունի հավատարիմ ստորաբաժանումներ, որոնց գումարվում են նաեւ «շաբիհա» կոչված հատուկ ջոկատայիններ, որոնք պատասխանատու են քաղաքացիների դեմ գործած բռնությունների մեծ մասի համար: Բացառելով իր անմիջական շրջանակից պետական հեղաշրջման եւ Մոսկվայի տրամադրությունների փոփոխման հնարավորությունները, չի կարելի ասել, որ Ասադը չի կարողանալու դիմանալ դեռեւս որոշ ժամանակ, մանավանդ որ ընդդիմությունը բաժանված է եւ զենքի խիստ պակաս է զգում:

Պաշտոնական տվյալներով՝ ավելի քան 100 հազար սիրիացիներ ապաստան են գտել Թուրքիայում: Իրական թվանակը կարող է կրկնակին լինել: Թուրքական բանակի եւ ասադամետ ուժերի միջեւ փոխհրաձգություններն առայժմ հնարավոր է եղել զսպել նաեւ այն պատճառով, որ Թուրքիայի հանրային կարծիքը դեմ է սրելու լարվածությունը: Բայց հաշվի առնելով, որ երկու կողմերի բանակներն էլ կազմ ու պատրաստ սպասողական վիճակում են, կարելի է ասել, որ պատերազմը սարերի հետեւում չէ:

Պրն Էրդողանը կարծես չի հասկանում իր դժվարին կացության հեգնանքը: Երկար ժամանակ չի անցել այն օրից, երբ Թուրքիան ողջունում էր, որ Ամերիկան հետ է քաշվում տարածաշրջանային իր գերիշխանությունից: Այժմ ողբում է, որ ԱՄՆ-ն հրաժարվում է առաջնորդի դերը կատարել այդ նույն տարածաշրջանում: Ապստամբներին Մ. Նահանգները առաջարկել է գործնական եւ հետախուզական աջակցություն ցուցաբերել, ինչպես նաեւ մարդկային օգնություն մատակարարել գաղթականներին: Մինչդեռ Անկարան ցանկանում է բուֆերային գոտիներ ցամաքի վրա եւ ոչ թռիչքային գոտիներ օդային տարածքում: Մ. Նահանգների պատասխանը դրան այն է, որ բավականաչափ մարտավարական շահեր չունի այնտեղ, որպեսզի իր զորքերը վտանգի ենթարկի: Միեւնույն ժամանակ Մ. Նահանգները վախենում է, որ «չափավոր» ապստամբներին մատակարարվող գերարդիական զենքերը կարող են շուտով հայտնվել ջիհադի պատրաստ խմբավորումների ձեռքերում, որոնք միացել են սիրիացի ապստամբներին եւ պաշտպանում են նրանց դասը:

Պրն Էրդողանը հույս ունի, որ վերընտրված Օբաման կամ նորընտիր Ռոմնին ավելի պատրաստ կլինեն խիզախ քայլերի դիմելու: Չէ՞ որ նրանք էլ են համամիտ Թուրքիայի գլխավոր նպատակին, որն է փոխել իշխանությունը Դամասկոսում: Ինչքան երկարի քաղաքացիական պատերազմը, այնքան ավելի հնարավոր է, որ Սիրիան էլ, Լիբանանի պես, խրվի երկարատեւ դավանանքային հակամարտության մեջ:

Թվում է, թե պրն Էրդողանը անտեսում է իր ներկա դժվարությունների տրամաբանությունը: Նա շարունակում է երկար ճառեր արտասանել Մերձավոր Արեւելքում Թուրքիայի նոր դերակատարման մասին, առանց նույնիսկ հարեւանցիորեն ակնարկելու Եվրոպայի հետ իր տնտեսական կապերի կամ էլ Մ. Նահանգների հետ անվտանգության վերաբերյալ իր հարաբերությունների մասին: Տպավորությունն այն է, որ Թուրքիան կարծես ընտրություն պետք է կատարի Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ: Իրականությունն այն է, որ արեւմտյան «խարիսխ» ունենալը արժեքավոր լծակ է Արեւելքում:

Իրաքյան պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում ընդհանուրի գիտակցությունը այն է, որ ոչ Մ. Նահանգները, ոչ էլ Եվրոպան այսուհետեւ չեն կարող հույս ունենալ, որ Մերձավոր Արեւելքում կփոխեն աշխարհաքաղաքական մթնոլորտը: Եվ դա չի նշանակում բոլորովին, որ նրանց փոխարեն Թուրքիան կամ մեկ ուրիշը կարող են ստանձնել այդ դերակատարությունը:

Թարգմ. Հ. Ծ.

ԱՄՆ

«Սենդին» «ամենաթանկ» ծովամրրիկն էր

Նախագահական ընտրությունները չեն հետաշգվի, նժարը դեպի Օբամա

Նոյեմբերի 2-ի դրությամբ ԱՄՆ-ում «Սենդի» ծովամրրիկի զոհերի թիվը հասել էր 98-ի: Ռոյթեր գործակալության տվյալներով, միայն Նյու Յորքի նահանգում զոհվել է 48 մարդ, այդ թվում 40-ը՝ Նյու Յորք քաղաքում: Զոհեր ու տուժածներ կան նաեւ Նյու Ջերսիում, Մերիլենդում, Արեւմտյան Վիրջինիայում, Հյուսիսային Կարոլինայում, Փենսիլվանիայում եւ Կոնեկտիկուտում: Կանադայում կա 1 զոհ:

«Սենդիի» զոհերի ընդհանուր թիվը 170 է (Կարիբյան ծովի երկրները ներառյալ):

Նյու Յորքի մետրոն մասնակիորեն վերսկսել է աշխատանքը: Վերստին գործում են սակարանը եւ բազմաթիվ այլ հաստատություններ: Ֆրանսորեսի տվյալներով, քաղաքում դեռ 1 մլն մարդ զրկված է մնում էլեկտրաէներգիայից: Էներգամատակարարումը պետք է լիովին վերականգնվի մինչեւ նոյեմբերի 11-ը:

Ծովամրրիկի նյութական վնասը ԱՄՆ-ում, ըստ նախնական հաշվարկների, 15-25 մլրդ դոլար է, սակայն Egecat կազմակերպության կանխատեսումների համաձայն կհասնեն 30-50 մլրդի, եւ դա էլ վերջնական չէ, քանի որ արեւելյան ափի որոշ շրջաններում վնասի չափերը դեռ ստույգ հայտնի չեն:

ԱՄՆ-ի պատմության մեջ «ամենաթանկ» ծովամրրիկը 2005-ին Նոր Օռլեանը հեղեղած եւ հարավային որոշ նահանգներով անցած «Կատրինան» էր, որի ընդհանուր վնասը կազմեց 108 մլրդ դոլար: «Սենդին» երկրորդ տեղում է, բայց արեւելյան ափին տված վնասների գծով առաջինն է: Ի դեպ, 50 միլիարդին պետք է ավելացնել ապահովագրական ընկերությունների 10-20 միլիարդի հասնող կորուստները:

Չնայած «Սենդիի» ավերածություններին, որոշվել է չհետաձգել նոյեմբերի 6-ին նախատեսված նախագահական ընտրությունները: Ի դեպ, «Սենդին» նպաստավոր է եղել առաջիկա ընտրություններում Օբամայի համար:

Մայրը որդուն սպանեց Ղուրանը սերտելու անկարողության համար

Մեծ Բրիտանիայում սկսվել է 32-ամյա մահմեդական Սառա Ի-գի դատավարությունը, որը սպանել էր որդուն, քանի որ նա չէր կարողացել անգիր անել Ղուրանի տեքստը: «Թելեգրաֆ» թերթը հաղորդում է, որ Կարդիֆ քաղաքի բնակչուհին այնպես է ծեծել 7-ամյա որդուն, որ նա մահացել է: Հետքերը թաքցնելու համար կինն այրել է որդու դիակը:

Սառայի խոսքերով, ինքը եւ ամուսինը ուզում էին որդուն դարձնել հաֆիզ՝ ամբողջ Ղուրանն անգիր իմացող մահմեդական: «Մենք վեհ նպատակ ունեինք. ուզում էինք, որ նա երեք ամսում անգիր անի 35 էջ»: Կինն ասել է, որ իբրեւ պարգեւ իրենք խոստացել էին գնել նոր հեծանիվ:

Սառան խոստովանել էր, որ ինքը վաս առաջադիմության համար քանիցս ծեծել էր որդուն: Կինը սկզբում ասել էր, թե որդին զոհվել է հրդեհի ժամանակ, բայց դիահերձումից հետո հանցագործությունը բացահայտվել էր: Ավելի ուշ Սառան խոստովանել էր իր հանցանքը՝ ասելով, թե սպանությունը կատարել է շեյթանի (սատանայի) հրամանով: Ամուսինը ժխտում է իր մեղսակցությունը:

«Լագարդի ցուցակը» հրապարակած հույն լրագրողն արդարացվեց

Աթենքի դատարանն արդարացրել է լրագրող Կոստաս Վախտեւանիսին, որը օրերս հրապարակել էր HSBC բանկի շվեյցարական բաժանմունքի հույն ավանդատուների ցանկը: Ցանկում մեծ թիվ են կազմում բարձրաստիճան պաշտոնյաները: «**Ազգը**» գրել էր, որ նրանց թվում է Հունաստանի խորհրդարանի նախագահը: Ռոյթեր գործակալությունը հիշեցնում է, որ լրագրողը դատական պատասխանատվության էր կանչվել մասնավոր կյանքի սահմանները խախտելու ամբաստանությամբ:

Hot Doc հանդեսի խմբագիր Վախտեւանիսը հոկտեմբերի 27-ին հրապարակել էր HSBC-ի շվեյցարական բաժանմունքի հույն ավանդատուների անունները, չնշելով ավանդների չափերը եւ միայն ակնարկելով, որ հաշիվների հանրագումարը կազմում է 500 մլն եվրո:

Հրապարակված ցանկը հայտնի է որպես «Լագարդի ցուցակ»՝ ԱՄՀ ներկայիս կարգադրիչ տնօրեն Քրիստիան Լագարդի անունով, որը 2010-ին Ֆրանսիայի ֆինանսների նախարարն էր: Այն ժամանակ նա Հունաստանի կառավարության խնդրանքով այդ ցանկը փոխանցել էր Աթենքի իշխանություններին:

Վախտեւանիսը դատարանում իրեն մեղավոր չի ճանաչել, պնդելով, որ ինքը քաղաքական հետապնդման է ենթարկվում հրապարակված ցանկի որոշ ազդեցիկ անձանց պատվերով: Լրագրողի մեղքը չի ապացուցվել, եւ նա ազատ է արձակվել:

ՆՈՐ ԱԼԲՈՄ

Մեծ ճանաչում վայելող «Սիստեմ ըվ է դաուն» խմբի գլխավոր վոկալիստ Սերժ Թանգյանն իր երգելու ոճակի ոճի եւ երգի բառերի ընտրության առանձնահատուկ ընդունակություններն է հանրությանը ներկայացրել «Հարակիրի» խորագրի ներքո թողարկած երրորդ ձայնագրությամբ: Ըստ Տրոնտոյից Blindedby Sound.com կայքի, որտեղից «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթն է արտատպել լուրը, բազմատաղանդ երգիչը փիլիսոփայական ծանր բեռ է դրել իր երաժշտական նոր «Ճանապարհորդության ուսերին», որը պանկ-ռոքի եւ մեղեդայնության յուրահատուկ խառնուրդ է:

«Հարակիրին» առաջիկա չորս ալբոմներից մեկն է: Նրան հաջորդելու են նվագախմբային «Օրկան», ջազային ռիթմերով հագեցած եւ հեսափրքական վերնագրով «Ջազ-իզ-Քրայսթը» եւ Ջիմմի Յուրինի («Mindless Self Indulgence») հետ էլեկտրոնային երաժշտական համագործակցության ալբոմը:

Մինչ «Սիստեմ ըվ է դաուն» խմբի աղագան օդից կախված է թվում, Թանգյանի կարիերան, որպես մենակատարի, կարծես առաջ է գնում առանց խոչընդոտների, բավականին հարթ օրինաչափություններով: «Հարակիրին» եւ հաջորդ երեք ալբոմները դրա վառ վկայությունն են:

Հ. Ծ.

Ալեքսանդր Թոփչյանի «Բանկ օսմանը» Մոսկվայում

Օրերս Մոսկվայի «Յունիպրես» հրատարակչությունը ռուսերեն լույս ընծայեց Ալեքսանդր Թոփչյանի «Բանկ օսման» վեպը՝ Անահիտ Թոփչյանի թարգմանությամբ եւ փոքր-ինչ փոխված վերնագրով. «Բանկ օսմանի գրավումը» («Захват Банка Оттоман»):

Վեպի ռուսերեն հրատարակության առթիվ, հավանաբար, տեղին է հիշել, որ խորհրդային տարիներին, հայ հեղինակներից առնվազն 10-12 գիրք էր տպագրվում Մոսկվայում: Պատկերն այսօր կտրուկ փոխվել է: Մոսկվան, առաջվա պես, այլեւս պարտավորված չէ թարգմանել եւ ներկայացնել անկախացած հանրապետությունների հեղինակներին: Այսօր որոշողը շուկան է կամ գործի գեղարվեստական մակարդակը: Տվյալ դեպքում, կարծում ենք, որոշիչը եղել է վերջինը:

Աղացույց, որ անկախությունից հետո ստեղծված արձակ կամ չափածո գործերից, թերեւս, ոչ մեկն այսպիսի ուշադրության չարժանացավ թե Հայաստանում, թե՛ դրսում: 2008 թ. Երեւանում տպագրվելուց հետո, վեց ամիս անց, 2009 թ. վեպը, դասական ուղղագրությամբ, Բեյրութում լույս ընծայեց «Արծիվ» հրատարակչությունը, իսկ 2010 թ. թերթոնով, ամբողջությամբ, տպագրեց ՀՅԴ օրգան «Երկիր» օրաթերթը: Երեւույթ, որ հավանաբար հազվագյուտ է, քանի որ լրագրերը գեղարվեստական երկերը թերթոնով սովորաբար ներկայացնում են գրքով հրատարակվելուց առաջ, մինչդեռ այս անգամ թերթը հաջորդեց գրքին:

Գուցե տեղին է հիշել, որ Ալ. Թոփչյանի նախորդ վեպերն էլ, նույնպես, լույս տեսան պարբերական մամուլում եւ առանձին գրքով: «Կիրկե կղզիին»-ն 1996 թ. գրքով տպագրվելուց առաջ, 1995 թ. միաժամանակ եւ ամբողջությամբ ներկայացրեցին «Գարունը» եւ Բեյրութի «Շիրակը», իսկ «Եվ անգամ մահից հետո»-ն առանձին գրքով ընթերցող հանրությանը մատուցվելուց առաջ տեղ գտավ «Նոր Դար» հանդեսի էջերին: «Բանկ օսմանի» վերոնշյալ ռուսերեն թարգմանությունն էլ նախ եւ առաջ, ամբողջությամբ, տպագրվեց «Լիտերատուրնայա Արմենիա» (2010 թ. N 3-4) հանդեսում: Նախկինում սովորական այս լավ ավանդույթն այսօր, ցավոք, գնալով դառնում է ավելի ու ավելի հազվադեպ:

Ինչ վերաբերում է օսար ընթերցողներին ներկայացվելուն, ապա 2010 թ. «Բանկ օսմանը» թարգմանվեց ռումիներեն եւ տպագրվեց Բուխարեստում, 2011 թ.՝ ֆրանսերեն, Փարիզում, եւ, վերջապես, 2012 թ. ռուսերեն՝ Մոսկվայում:

Իսպանական Աղարանն ու «Արմենիապրես» առաջին հայկական լրատվական կայքէջը

Եթե դուք բացեք իսպանական հայտնի www.vegamediapress.com կայքը, ապա այնտեղ առանձին ենթաբաժնով կտեսնեք Armenia բառը: Բաժինն ամեն օր թարմացվում է եւ իսպաներենով ներկայացնում բազմաթիվ հոդվածներ Հայաստանի ու հայության մասին: Նախաձեռնությունը **Արթուր Ղուկասյանինն** է, ում լրագրողական գործունեությունը մի քանի տասնամյակի պատմություն ունի:

Նախ Հայաստանում, այնուհետեւ Արցախում Ղուկասյանը ոչ միայն լրագրողական, այլեւ հայրենասիրական լուրջ գործունեություն է ծավալել: Արցախ մեկնել է 1988-ին. Ասկերանի շրջանի ներկայիս Խաչեն գյուղի դպրոցում աշխատել որպես ուսուցիչ:

«Հարակիրին» առաջիկա չորս ալբոմներից մեկն է: Նրան հաջորդելու են նվագախմբային «Օրկան», ջազային ռիթմերով հագեցած եւ հեսափրքական վերնագրով «Ջազ-իզ-Քրայսթը» եւ Ջիմմի Յուրինի («Mindless Self Indulgence») հետ էլեկտրոնային երաժշտական համագործակցության ալբոմը:

Մինչ «Սիստեմ ըվ է դաուն» խմբի աղագան օդից կախված է թվում, Թանգյանի կարիերան, որպես մենակատարի, կարծես առաջ է գնում առանց խոչընդոտների, բավականին հարթ օրինաչափություններով: «Հարակիրին» եւ հաջորդ երեք ալբոմները դրա վառ վկայությունն են:

Հ. Ծ.

Եթե դուք բացեք իսպանական հայտնի www.vegamediapress.com կայքը, ապա այնտեղ առանձին ենթաբաժնով կտեսնեք Armenia բառը: Բաժինն ամեն օր թարմացվում է եւ իսպաներենով ներկայացնում բազմաթիվ հոդվածներ Հայաստանի ու հայության մասին: Նախաձեռնությունը Արթուր Ղուկասյանինն է, ում լրագրողական գործունեությունը մի քանի տասնամյակի պատմություն ունի:

Նախ Հայաստանում, այնուհետեւ Արցախում Ղուկասյանը ոչ միայն լրագրողական, այլեւ հայրենասիրական լուրջ գործունեություն է ծավալել: Արցախ մեկնել է 1988-ին. Ասկերանի շրջանի ներկայիս Խաչեն գյուղի դպրոցում աշխատել որպես ուսուցիչ:

Ավելի ուշ, կյանքի բերումով Ղուկասյանը մեկնել է Հունաստան, այնտեղից սկսվել է լրագրողական գործունեության երկրորդ շնչառությունը: Աթենքում համագործակցել է ՌԱԿ-ի «Նոր աշխարհ» շաբաթաթերթի հետ, ավելի ուշ տեղական «Ղնոմի» («Միտք») թերթում որպես սյունակագիր հոդվածներ է գրել Ղարաբաղյան հակամարտության, Հայաստանի, Հայոց ցեղասպանության, մշակույթի եւ պատմության մասին:

Իսպանիայի Վալենսիա քաղաքում Ղուկասյանը հաստատվել է 2002թ: Նա առաջին ու դեռեւս միակ հայ լրագրողն է, որ դարձել է Իսպանիայի լրագրողների միության եւ Մադրիդի միջազգային ակումբի անդամ: Իսպանիայում հրապարակված առաջին հոդվածը «Ակօսի» գլխավոր խմբագրի մասին էր՝ «Հրանտ Դինքը բոլորս ենք» վերնագրով: Հետագայում Ղուկասյանը գրեց ծավալուն մի հոդված Նախիջեւանի խաչքարերի ոչնչացման, դրանց պատմության մասին: Ավելի ուշ www.vegamediapress.com կայքում Armeniapress ենթաբաժնում Ղուկասյանը սկսեց հոդվածներ գրել Հայաստանի ու հայ իրականության մասին, իսպանացի ընթերցողին ներկայացրեց հայ մշակույթն ու պատմությունը: 2009-ին Մադրիդի միջազգային ակումբը նրան պարգեւեց www.vegamediapress.com կայքի «լավագույն արտասահմանցի լրագրող» մրցանակը:

«Իսպանացիները Հայաստանի մասին գրեթե ոչինչ չգիտեին: Այս կայքը նման է աղբյուրի, որ կաթիլ-կաթիլ տեղեկություն է տալիս Հայաստանի անցյալի եւ ներկայի, դժվարությունների, կենցաղի ու մշակույթի մասին: Ժամանակի ընթացքում իսպանացիները սկսեցին հետաքրքրվել Հայաստանով: Նրանց նախ գրավեց անունը՝ Արմենիա: Ժամանակի ընթացքում այցելուների թիվը սկսեց շատանալ», ասում է Արթուր Ղուկասյանը:

«Իսպանիան մի երկիր է, որ սերտ հարաբերություններ ունի Թուրքիայի հետ», ասում է նա՝ հավելելով, թե հենց դա էր պատճառը, որ հայկական կողմը հսկայական դժվարություններ ունեցավ խորհրդարանում Հայոց ցեղասպանության հարցն օրակարգ մտցնելու ժամանակ. պատգամավորները դեմ քվեարկեցին, քանի որ նրանք տեղեկացված չէին:

«Նախ պետք էր տեղեկացնել հասարակությանը, մտավորականությանը Հայաստանի մասին: Երկար ջանքերից հետո կարողացանք Հայաստանի մասին ֆիլմ ներկայացնել հեռուստատեսությամբ: Այնուհետեւ եղան հեռուստաֆիլմեր-կումներ, իսպանացի հասարակությունն ավելի լավ ճանաչեց հայերին»:

Թեպետ տեղական մակարդակով միջոցառումներ շատ են եղել, սակայն զանգվածային առաջին միջոցառումը 2007-ին էր, երբ Մադրիդում շուրջ չորս հազար իսպանահայեր ապրիլի 24-ին մասնակցեցին սգո երթին: «Դրանից հետո մենք հույս ունեինք, որ իսպանահայությունը կհամախմբվեր եւ կդառնար մեկ բռունցք, սակայն այդպես չեղավ», հիշում է Արթուր Ղուկասյանը:

Իսպանիայում այսօր բնակվում է 50000 հայ: Նրանց մեծամասնությունը Իսպանիա է տեղափոխվել Հայաստանից 90-ականներին:

Վալենսիա, Բարսելոն, Մադրիդ. Ալեգանտե: Սրանք այն քաղաքներն են, որտեղ հիմնականում բնակվում են հայերը: Հայերը մեծ մասամբ զբաղվում են շինարարությամբ կամ գյուղատնտեսական աշխատանքներով: Կան առանձին իսպանահայեր, ովքեր ժամանակի ընթացքում բիզնես են ստեղծել, սակայն դրանք մեծամասնություն չեն կազմում:

«Համայնք ասել ես դժվարանում եմ, որովհետեւ Իսպանիայում համայնքը ձեւավորման փուլում է: Դա համայնք չէ, այլ իսպանահայություն:

Իսպանիայում հայերը ոչ միայն միասնական չեն, այլ նաեւ առկա է անտարբերություն: Նրանք հոգնել են ամեն ինչից եւ չեն ուզում որեւէ խնդրի առնչությամբ մտածել, մտահոգվել կամ որեւէ միջոցառման մասնակից լինել:

Սակայն դրան զուգահեռ կան անձինք, ովքեր կարողանում են լուրջ աշխատանք ծավալել հայապահպանության գործում: Բարսելոնում Հայ-իսպանական բարեկամության միություն է գործում, որի նախագահը Դավիթ Հարությունյանն է: 3-4 հոգով գործընթաց սկսեցին, որպեսզի Կատալոնիան ընդունի Հայոց ցեղասպանությունը: Խումբը շատ երկար աշխատանք տարավ, հանդիպումներ ունեցավ պատգամավորների, մտավորականության հետ, Ցեղասպանության մասին պատգամավորները տեղեկացան եւ կարողացան ներգրավվել այդ պայքարում:

Ալեգանտե քաղաքում գործում է «Արմենիա» միությունը, հենց նրա շնորհիվ Իսպանիայում տեղադրվեց առաջին խաչքարը: Սակայն այս ամենը բավարար չէ: Պետք է համակարգող մարմին ստեղծվի, որպեսզի Սփյուռքի միությունները համախմբվեն, որպեսզի հետո լինի աշխատանքը: Այլապես աշխատանքը չի ստացվում, եւ դա է ամենասարսափելին»:

Բացառությամբ «Արմենիապրես» լրատվական էջի, Իսպանիայում այլ մամուլ չի գործում, որտեղ հնարավոր կլինի անդրադառնալ հայ համայնքին եւ Հայաստանին: Ղուկասյանը հույս ունի, որ ապագայում հնարավորություն կստեղծվի որ հայերն այնտեղ ունենան որոշակի եթերաժամ ռադիոյով եւ հեռուստատեսությամբ: «Սակայն դա ֆինանս է պահանջում, իսկ այսօր Իսպանիան տնտեսական լուրջ խնդիրների առաջ է կանգնած», ասում է Ղուկասյանը:

Հետաքրքրական է, որ Իսպանիայում այսօր կա Աղարան անունով քաղաք: Իսպանական Աղարանի բացահայտողը Ղուկասյանն էր: Նա հոդված գրեց հայկական եւ իսպանական Աղարանների մասին՝ առաջարկությամբ, որ երկու քաղաքները դառնան քույր: Հայկական Աղարանի քաղաքապետն էլ հոդված գրեց եւ պատմեց քաղաքի պատմության մասին՝ ցանկությամբ, որ աշխարհագրորեն միմյանցից հեռու, սակայն զուգադիպությամբ նույն անունն ունեցող երկու քաղաքները բարեկամանան: Իսպանական կողմը համաձայնեց, սակայն վրա հասած տնտեսական ճգնաժամի պատճառով հարցը ձգձգվում է: Ղուկասյանը վստահ է՝ երկու քաղաքների բարեկամացումը խթան կդառնա երկու երկրների համագործակցության լայնացման եւ խորացման հարցում:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվա Սուջյանի ու նրա ռոք-բենդի՝ «Ռոքն ընդդեմ երեխաների հիվանդության» խորագրով մենահամերգ

«Օգնենք հայ մանուկներին» բարեգործական հասարակական կազմակերպությունը Երեւանի պետական տիկնիկային թատրոնի աջակցությամբ կազմակերպում է Եվա Սուջյանի ու նրա ռոք-բենդի այս տարվա վերջին եւ մեծ մենահամերգը: «Ռոքն ընդդեմ երեխաների հիվանդության» խորագրով ռոք-համերգը, որն իր բնույթով բարեգործական է, կկայանա նոյեմբերի 19-ին ժամը՝ 19:00-ին Տիկնիկային թատրոնի դահլիճում:

Եվան ու իր ռոք-բենդը, որի կազմում են Արթուր Մարգարյանը (սոլո կիթառ), Հովհաննես Հարությունյանը (բաս կիթառ), Արթուր Հովակիմյանը (ստեղնաշարային գործիքներ) եւ Գեւորգ Հարությունյանը (հարվածային գործիքներ), կներկայանան ինչպես հին ու սիրված երգերով, այնպես էլ մի քանի նոր կատարումներով: Համերգի ընթացքում նաեւ մեծ անակնկալ է սպասվում հայկական ռոքի բոլոր սիրահարների համար:

Համերգից ստացված ողջ հասույթը կփոխանցվի մաշկային հիվանդությունից բուժվող 4-ամյա Ռիտա Ղարիբյանի հաշվեհամարին: Տոմսերը ձեռք բերելու համար անհրաժեշտ է զանգահարել (093) 373238 կամ (055) 266061 հեռախոսահամարներով, կամ այցելել Երեւանի պետական տիկնիկային թատրոնի դրամարկղ՝ Սայաթ -Նովա 4 հասցեով: Տոմսերի արժեքն է՝ 1000, 2000 եւ 3000 դրամ:

«Օգնենք հայ մանուկներին» կազմակերպությունը սիրով սպասում է բոլորին՝ միասին հաճելի երաժշտական երեկո վայելելու եւ դրանով իսկ բարի գործ կատարելու՝ կոչ անելով անտարբեր չմնալ օգնության կարիք ունեցող երեխաների ճակատագրերի նկատմամբ:

Պաշտպանության նախարարության թիմը «ՀՀ վարչապետի գավաթի» եռակի հաղթող

Երեկ սովորականից ավելի մարդաշաս էր «Հանրապետական» մարզադաշտը, որտեղ կայացավ ֆուտբոլի «ՀՀ վարչապետի գավաթի» 4-րդ խաղարկության եզրափակիչ հանդիպումը: Պատվավոր մրցանակը վիճարկեցին Հայաստանի պաշտպանության ու կրթության եւ գիտության նախարարությունների թիմերը:

Հանդիպմանը ներկա էին ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը, հանրապետության ոստիկանապետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանը, գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանը, սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը, կառավարության այլ անդամներ:

Մինչեւ հանդիպման սկսվելը ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին արցախյան հերոսամարտում զոհված ազատամարտիկների հիշատակը: Ինչ վերաբերում է վճռորոշ հանդիպմանը, ապա այն անցավ պաշտպանության նախարարության թիմի զգալի առավելությամբ: Դեռեւս առաջին խաղակեսին բանակային ֆուտբոլիստները գոլային մի քանի պահեր ստեղծեցին, սակայն միայն 40-րդ րոպեին կարողացան բացել հաշիվը: Աչքի ընկավ Արմեն Իգիթյանը:

Ընդմիջումից հետո բանակային ֆուտբոլիստների առավելությունն ավելի ակնհայտ դարձավ, որտեղ 4 անգամ գրավեցին Վահան Շմավոնյանի պաշտպանած դարպասը: 2 գոլի հեղինակ դարձավ Արթուր Գաբրիելյանը, մեկական անգամ էլ մրցակցի դարպասը գրավեցին Էդիկ Ավանեսյանն ու Արմեն Իգիթյանը:

Հաղթելով 5-0 հաշվով, պաշտպանության նախարարության թիմը դարձավ «ՀՀ վարչապետի գավաթի» եռակի հաղթող: Նախկինում թիմը նման հաջողության էր հասել 2009-ին եւ 2010-ին: Անցյալ տարի ուժեղագույնը ՀՀ դատախազության թիմն էր:

Պարգեւատրման հանդիսավոր արարողության ժամանակ դիմելով ներկաներին, ՀՀ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** մասնավորապես նշեց. «Սիրելի բարեկամներ: Բոլորիս շնորհավորում եմ ֆուտբոլային այս գեղեցիկ տոնի առթիվ, շնորհավորում եմ նաեւ պաշտպանության նախարարության թիմին հաղթանակի առիթով: Սա մեր բոլորիս հաղթանակն է: Այս մրցաշարում բոլոր թիմերն էլ պայքար մղեցին եւ, կարծում եմ, որ պարտվողներ չկային: Եվս մեկ անգամ սրանց շնորհավորում եմ ֆուտբոլային այս տոնի առթիվ»:

Տիգրան Սարգսյանը գլխավոր մրցանակը՝ «ՀՀ վարչապետի գավաթը», հանձնեց պաշտպանության նախարարության թիմի ավագին, իսկ ֆուտբոլիստներին պարգեւատրեց ոսկե մեդալներով, դիպլոմներով ու մարզահագուստով: Թիմը 600 հազար դրամ պարգեւավճար ստացավ:

2-րդ տեղը գրաված կրթության եւ գիտության նախարարության թիմին արծաթե մեդալներով, դիպլոմներով ու մարզահագուստով պարգեւատրեց սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Հրաչյա Ռոստոմյանը: Թիմին հանձնվեց նաեւ գավաթ ու 400 հազար դրամ պարգեւավճար:

3-րդ մրցանակակիր՝ ոստիկանության թիմի պարգեւատրումը կատարեց ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, գեներալ-լեյտենանտ Հովհաննես Հունանյանը: Թիմը պարգեւատրվեց գավաթով ու 200 հազար դրամով:

Հատուկ մրցանակներ հանձնվեցին մրցաշարի լավագույն դարպասապահ Միսակ Հակոբյանին (դատախազության թիմ), պաշտպան Մնացական Քոչարյանին (արտակարգ իրավիճակների նախարարություն), կիսապաշտպան Արա Մանվելյանին (աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն), լավագույն խաղացող Արթուր Գաբրիելյանին (պաշտպանության նախարարություն) եւ լավագույն ռմբարկու Գեւորգ Մկրտչյանին (կրթության եւ գիտության նախարարություն):

Ամենակարգապահ թիմի համար սահմանված «Արդար խաղի» մրցանակին արժանացավ ՀՀ կառավարության թիմը:

Սարգիս Հովսեփյանը նշեց 40-ամյակը

Երեկ լրացավ ՀՀ հավաքականի եւ «Փյունիկի» նախկին ավագ Սարգիս Հովսեփյանի ծննդյան 40-ամյակը: Ծննդյան տարեդարձի առթիվ անվանի ֆուտբոլիստին շնորհավորել է ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը:

Սարգիս Հովսեփյանը նորանկախ Հայաստանի ամենաճանաչված ու տիպողսակիր ֆուտբոլիստներից մեկն է: Նա 10 անգամ «Փյունիկի» կազմում նվաճել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը, արժանացել է երկրի գավաթակրի եւ սուպերգավաթակրի կոչումներին: Սարգիս Հովսեփյանը 1992-ին կայացած Հայաստանի անդրանիկ առաջնության լավագույն ֆուտբոլիստն է: Հետագայում նա եւս 2 անգամ (1995-ին եւ 2008-ին) ճանաչվեց լավագույնը՝ սահմանելով յուրօրինակ ռեկորդ:

Անցկացրած խաղերի քանակով էլ (365) Սարգիս Հովսեփյանը «Փյունիկի» ռեկորդակիրն է: Փորձառու ֆուտբոլիստը 20 տարի շարունակ հանդես է եկել Հայաստանի ազգային հավաքականում՝ երկար տարիներ կրելով ավագի թեւկապը: Հավաքականում Սարգիսը 131 խաղ է անցկացրել, ինչը եւս յուրօրինակ ռեկորդ է: Համեմատության համար նշենք, որ 2-րդ ցուցանիշն ունեցող 38-ամյա Ռոման Բերեզովսկին ընդամենը 74 անգամ է խաղադաշտ դուրս եկել: Այնպես որ հավաքականում Հովսեփյանի ռեկորդը դեռեւս երկար տարիներ անգերազանցելի կմնա: Թերեւս նրա ցուցանիշը կարողանա գերազանցել Հենրիխ Մխիթարյանը, որն արդեն 34 անգամ կրել է ազգային հավաքականի մարզաշապիկը: Ճիշտ է, դրա համար Հենրիխն էլ Հովսեփյանի պես պետք է աչքի ընկնի ֆուտբոլային երկարակեցությամբ:

Անցած տարի Սարգիս Հովսեփյանը հավաքականում 100-ից ավելի խաղեր անցկացնելու համար արժանացավ ՈՒԵՖԱ-ի հատուկ մրցանակի: Սարգիսը բազմիցս հայտարարել էր, որ իր 40-ամյակը նշելու է խաղադաշտում, սակայն հանգամանքների բերումով սեպտեմբերի 20-ին նա շատերի համար անսպասելի հայտարարեց մեծ ֆուտբոլին հրաժեշտ տալու մասին:

Նոյեմբերի 14-ին «Հանրապետական» մարզադաշտում Սարգիս Հովսեփյանը վերջին անգամ կկրի Հայաստանի հավաքականի մարզաշապիկը: Լիտվայի հավաքականի հետ ընկերական հանդիպման ժամանակ կկազմակերպվի հայկական ֆուտբոլի անվանի վետերանի հրաժեշտի խաղը: Ինչ խոսք, Սարգիսն արժանի է նման վերաբերմունքի: Եվ ընդհանրապես լավ կլինի, որ նման միջոցառումներն ավանդույթի վերածվեն ու արժանին մատուցվի հայկական ֆուտբոլում մեծ ծառայություններ ունեցող ֆուտբոլիստներին: Ցավոք, ժամանակին այդպես էլ չկազմակերպվեցին ՀՀ հավաքականի ֆուտբոլիստներ Արթուր Պետրոսյանի, Հարություն Վարդանյանի, Արմեն Շահգելդյանի, Հարություն Աբրահամյանի եւ մյուս արժանավորների՝ ֆուտբոլին հրաժեշտ տալու միջոցառումները: Հուսանք, որ այսուհետ այդ բացը կլրացվի:

ՇԱԽՄԱՏ

Վլադիմիր Հակոբյանը շարունակեց հաղթարշավը

Միխայիլ Չիգորինի հուշամրցաշարի հայաստանցի մասնակիցներից ամենափորձառուն՝ Վլադիմիր Հակոբյանը 3-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով բելառուս Կիրիլ Ստուպակին: Այդ հաղթանակի շնորհիվ Հակոբյանը վաստակեց 5 միավոր եւ այժմ ընթանում է 10-րդ տեղում: Նույնպիսի արդյունք ունի նաեւ 5-րդ հորիզոնականը զբաղեցնող Ռոբերտ Հովհաննիսյանը, որը նախորդ տուրում կրած անհաջողությունից հետո 6-րդ տուրում պարտության մատնեց ռուսաստանցի Միխայիլ Անտիպովին:

Մեր 2 շախմատիստներն ընդամենը կես միավոր են զիջում մրցաշարի առաջատարներ, ռուսաստանցիներ Ալեքսանդր Շիմանովին, Անտոն Դեմչենկոյին, իսրայելցի Իլյա Սմիրինին եւ ուկրաինացի Ալեքսանդր Արեշչենկոյին: Դեմչենկոն ու Շիմանովը միմյանց հետ հաշտություն կնքեցին: Արեշչենկոն հաղթեց Բարսոզ Սոչկոյին, Սմիրինն առավելության հասավ Իվան Պոպովի նկատմամբ:

4,5-ական միավոր ունեն Ավետիք Գրիգորյանն ու Զավեն Անդրեասյանը: Գրիգորյանը հաշտություն կնքեց Բոգդան Բելյակովի հետ, իսկ Զավենը հաղթեց Դաս Դեբաշիսին: 4-ական միավոր վաստակած Հովիկ Հայրապետյանն ու Վահե Բաղդասարյանը հաշտություն կնքեցին համապատասխանաբար Իգոր Լիսիի եւ Մարաս Մակարովի հետ: Հաղթելով Ալեքսանդր Պավլովին, Արմեն Անտինյանը վաստակեց 3,5 միավոր: 2,5-ական միավոր ունեն Վլադիմիր Պողոսյանն ու Գոռ Ալեքսանյանը, 2-ական՝ Աննա Հայրապետյանն ու Մարկ Բասենչյանը:

Ուժեղագույնը ՀՄԴ-ի հավաքականն էր

Ֆիզկուլտուրայի ինստիտուտի մարզասրահում իրենց մրցավեճն ավարտեցին մինչեւ 15 տարեկան հանդբոլիստուհիները, որոնք վիճարկում էին հանրապետության պատանեկան առաջնության պարգեւները: 6 թիմերի մրցավեճում ուժեղագույնը հանդբոլի մանկապատանեկան մարզադպրոցի հավաքականն էր, որը պարտության մատնեց բոլոր մրցակիցներին: Ոսկե մեդալների համար պայքարում վճռորոշ էր մրցումների վերջին օրը կայացած ՀՄԴ-Վանաձոր հանդիպումը: Մինչ այդ մրցակիցները 4-ական հաղթանակ էին տոնել: ՀՄԴ-ի հանդբոլիստուհիներին հաջողվեց այդ խաղում էլ հաղթել (24-16) ու նվաճել չեմպիոնի տիտղոսը:

Վանաձորի հավաքականը 8 միավորով գրավեց 2-րդ տեղը: 5-ական միավոր վաստակեցին Շենգավիթի եւ Արցախի հավաքականները, որոնց մրցավեճում գրանցվել էր ոչոքի (19-19): Ուսի բրոնզե մեդալների հարցը վճռվեց խփած եւ բաց թողած գնդակների տարբերությամբ: Այդ ցուցանիշով 3-րդ մրցանակակիր դարձավ Շենգավիթի թիմը:

Առաջնության լավագույն խաղացող ճանաչվեց ՀՄԴ-ի ներկայացուցիչ Անի Գաղոյանը, լավագույն դարպասապահ՝ վանաձորցի Լիանա Սարգսյանը: Երկուսն էլ արժանացան հանդբոլի ֆեդերացիայի սահմանած մրցանակներին:

Նոյեմբերի 7-ին Երեւանում կմեկնարկի մինչեւ 15 տարեկանների հանդբոլիստների Հայաստանի առաջնության եզրափակիչ մրցաշարը:

Հոլիֆիլդը դատական հայց է ներկայացրել աճուրդային ընկերության դեմ

Գերծանրաքաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն Էվանդեր Հոլիֆիլդը դատական հայց է ներկայացրել Juliens Auctions աճուրդային ընկերության դեմ՝ պահանջելով չեղյալ համարել առաջիկայում կայանալիք աճուրդը: Այդ աճուրդում պետք է վաճառքի հանվի պրոֆեսիոնալ բռնցքամարտիկին պատկանող 450 իր:



Նախկինում Հոլիֆիլդը համաձայնել էր աճուրդի հանել իր իրերը, քանի որ ներկայումս ֆինանսական լուրջ խնդիրներ ունի: Սակայն ծանոթանալով աճուրդի դրվելիք իրերի ցանկին, նա հայտնաբերել է որոշ իրեր, որոնց աճուրդի հանելու իրավունքն ինքը չէր տվել ընկերությանը: Դրանց թվում են բռնցքամարտիկի այն ձեռնոցները, որով Հոլիֆիլդը մենամարտել է Մայք Թայսոնի հետ 1996-ին, թիկնոցը, որով նա ռինգ էր դուրս եկել օլիմպիական խաղերի ժամանակ, Father of the Year մրցանակն ու 1993-ին նվաճած չեմպիոնական գոտիները:

Դատական հայցի առիթով աճուրդային ընկերության նախագահ Դարեն Ժուլյենը հայտարարել է, որ ցանկում հրապարակված բոլոր իրերն աճուրդի դնելու իրավունքն իրենք ժամանակին ստացել են Հոլիֆիլդից: Կարճ ժամանակում ցանկում նշված իրերն ընկերության աշխատակիցները վերցրել են Ատլանտայում գտնվող Հոլիֆիլդի առանձնատնից, որը հետագայում վաճառվել էր աճուրդով՝ բռնցքամարտիկի պարտքերը մարելու նպատակով: Ըստ Ժուլյենի, բռնցքամարտիկն իր ցանկալի իրերը ժամանակին արդեն վերցրել էր: Նա չի բացառել, որ Հոլիֆիլդը պարզապես փոթել է իրերի ցանկը:

Օլիմպիական փառատոնին կմասնակցեն նաեւ հայ մարզիկները

Հայաստանի մարզական պատվիրակությունը կմասնակցի 2013-ի փետրվարի 16-20-ը ռումինական Բրաշով քաղաքում կայանալիք Եվրոպայի ձմեռային երիտասարդական 11-րդ օլիմպիական փառատոնին: Նախատեսվում է, որ խոշորագույն այդ փառատոնին կմասնակցեն Եվրոպայի 49 երկրներից ժամանած մարզիկները:

Փառատոնի ծրագրում ընդգրկված է 8 մարզաձեւ՝ դահուկավազք, լեռնադահուկային սպորտ, դահուկային ոսնակացատկ, բիաթլոն, գեղասահք, չմշկավազք, սնոուբորդ եւ տափօղակով հոկեյ:

Հիշեցնենք, որ Եվրոպայի ձմեռային երիտասարդական օլիմպիական առաջին փառատոնը տեղի է ունեցել 1993-ին Իտալիայի Աոստա քաղաքում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՎիվաՍել-ՄՏՍ-ն եւ Սինոփսիս Արմենիան համագործակցում են Հայաստանի աշխատաշուկային արտադրությանը պատրաստ շրջանավարտներ տրամադրելու ուղղությամբ

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատորը շուրջ 42 մլն դրամ է հատկացրել Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիային՝ «Միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» ամբիոնում կրթական ժամանակակից երկու լաբորատորիա ստեղծելու համար:

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ բուհական կրթությանն աջակցելու Սինոփսիս Արմենիայի, ՎիվաՍել-ՄՏՍ-ի եւ ակադեմիայի համագործակցությունը հերթական հաջողությունն է արձանագրել:

Մեկ տարի առաջ կողմերը գործնական քայլեր էին կատարել՝ ստորագրած եռակողմ համաձայնագրից բխող նպատակների ուղղությամբ: Ստեղծվել էր կրթական առաջին լաբորատորիան, որի համար ՎիվաՍել-ՄՏՍ-ն ներդրել էր շուրջ 15 մլն դրամ, իսկ Սինոփսիս Արմենիան Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիային (ԵԿՏԱ) անվճար հիմունքներով տրամադրել էր էլեկտրոնային ավտոմատ նախագծման ուսումնական 20 փաթեթի հավաստագիր: Նույն հիմունքներով նույնքան հավաստագիր Սինոփսիսը տրամադրել է նաեւ այս տարի, իսկ ՎիվաՍել-ՄՏՍ-ի ներդրումը հասել է շուրջ 27 մլն դրամի:

«Ժամանակակից աշխարհը թելադրում է իր պահանջները եւ պարտավորեցնում լինել ճկուն՝ որակյալ կրթություն ստանալու հարցում: ՎիվաՍել-ՄՏՍ-ը պատրաստ է աջակցել կյանքի մարտահրավերներն ընդունելու եւ գիտելիքով զինված ապագա կերտելու ուսանողների ձգտումը: Ընդլայնեք Ձեր իմացության սահմանները եւ ՏՏ ոլորտում առավել բարձր նշաձողի հասցրեք մեր երկրի վարկանիշը», ասել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

«Կապի միջոցների միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» մասնագիտացման շրջանակներում իրականացվող Սինոփսիսի կրթական մոդելը, ԵԿՏԱ ուսանողությանը թույլ կտա զգալ բուհ-արտադրություն կապը, ձեռք բերել բարձր արտադրողականություն երաշխավորող բավարար գիտելիքներ եւ հմտություններ: Ուսումնական մոդելի համաձայն՝ բակալավրական ծրագրի երկրորդ կուրսի ավարտին, ընդհանուր կրթական առարկաներից հիմնարար գիտելիքներ ստացած ԵԿՏԱ ՏՏ ֆակուլտետի բարձր առաջադիմությամբ ուսանողները, մրցութային կարգով կընդգրկվեն ծրագրում: Ընտրությունը կկատարվի Սինոփսիսի եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ի առաջատար մասնագետների եւ ԵԿՏԱ արհեստավարժ դասախոսների կողմից:

«Տեղեկատվական եւ հեռահաղորդակցության ոլորտի զարգացման գերկարեւոր նախապայման է բարձրորակ եւ ժամանակակից պահանջներին բավարարող մասնագետների առկայությունը», - ասել է Սինոփսիս Արմենիայի տնօրեն Հովիկ Մուսայելյանը: «Այս ծրագիրը ոլորտում տեսական գերժամանակակից գիտելիքներով եւ գործնական հմտություններով զինված մասնագետների պատրաստման համար եռակողմ համագործակցության փայլուն օրինակ է»:

«Կիրառվող բուհ-արտադրություն կրթական մոդելի կարեւոր առանձնահատկություններից է նաեւ դրա ադապտացվելու հատկությունը կոնկրետ կիրառական բնագավառին, ինչը լավագույն ձեւով դրսեւորվում է կապի միջոցների եւ հեռահաղորդակցության ասպարեզի դեպքում», - ասում է ՀՀ գիտության վստահելի գործիչ, Սինոփսիս Արմենիայի ուսումնական դեպարտամենտի տնօրեն եւ ԵԿՏԱ «Միկրոէլեկտրոնային սխեմաներ եւ համակարգեր» համաբուհական ամբիոնի վարիչ պրոֆ. Վազգեն Մելիքյանը: «Վստահ եմ, որ այս համագործակցության դեպքում կունենանք նույնպիսի հաջողություններ, ինչպիսին արձանագրել ենք Հայաստանի եւ տարածաշրջանի այլ բուհերի հետ մեր համագործակցության դեպքում»:

«Սինոփսիս Արմենիայի եւ ՎիվաՍել-ՄՏՍ-ի հետ մեր համագործակցությունը մեծապես նպաստում եւ աջակցում է ակադեմիայի բակալավրի կրթական ծրագրերի բարելավմանը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ուսանողներին առաջարկելով նոր մակարդակի մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ հատկապես միկրոէլեկտրոնիկայի մասնագիտացման շրջանակներում», ասել է ԵԿՏԱ ռեկտոր **Անդրանիկ Ավետիսյանը**: «Ուսումնառության ընթացքում եւ պրակտիկաների ժամանակ ուսանողներին հնարավորություն է ընձեռնվում կիրառել գիտելիքները եւ հմտությունները կրթական ծրագրի համահիմնադիր ու համահեղինակ արտադրության ներկայացուցիչների կողմից տրամադրվող իրական նախագծերի շրջանակներում, ինչը եւս նպաստում է անմիջապես ուսումնառության ավարտից հետո մասնագիտական աշխատանքը մեկնարկելուն»:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի հատկացրած ֆինանսական աջակցության շնորհիվ, լսարանային տարածքը կհամապատասխանեցվի արդի ուսումնական պահանջներին եւ չափանիշներին, այն կապահովվի համակարգչային տեխնիկայով, ինչպես նաեւ կհատկացվեն ամբիոնի պրոֆեսորա-դասախոսական կազմի աշխատավարձն ու հավասարեցված այլ վճարներ:

«ՄՏՍ կոնեկտ E353» մոդեմն ընդամենը 2000 դրամով

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ մինչեւ դեկտեմբերի 31-ը դառնալով «ՄՏՍ կոնեկտ 256», «ՄՏՍ կոնեկտ ուսանողական», «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ» կամ «ՄՏՍ կոնեկտ անսահմանափակ+» սակագնային պլանի բաժանորդ առնվազն մեկ տարով՝ «ՄՏՍ կոնեկտ E353» USB մոդեմը կարելի է ձեռք բերել ընդամենը 2000 դրամով՝ նախկին 10000 դրամի փոխարեն:

Հիշեցնենք, որ «ՄՏՍ կոնեկտ E353» մոդեմն ապահովում է ներբեռնման մինչեւ 21,6 Մբիթ/վրկ եւ վերբեռնման՝ մինչեւ 5,76 Մբիթ/վրկ արագություն:

Անակնկալ «ՄՏՍ կոնեկտ ուսանողական» սակագնային պլանի բաժանորդների համար

ՎիվաՍել-ՄՏՍ-ն՝ «ՄՏՍ» ԲԲԸ դուստր ընկերությունը, տեղեկացնում է, որ նոյեմբերի 1-ից մինչեւ 2013 թ. հունիսի 30-ը «ՄՏՍ կոնեկտ ուսանողական» սակագնային պլանի շրջանակներում 3ԳԲ-ի փոխարեն կտրամադրվի 5ԳԲ գերարագ ինտերնետի փաթեթ:

Հիշեցնենք, որ գերարագ փաթեթից օգտվելիս ինտերնետի արագությունը սակագնային պլանով չի սահմանափակվում եւ կախված է օգտագործվող մոդեմից:

ԱՆԳՐԱԳԱՐՁ

Բուսակերությունը պարտադրանք չէ, սակայն առողջ ապրելակերպի գրավականներից է

2-րդ էջից

Աշխարհում այսօր բուսակերների թիվը կտրուկ շատացել է: Դա հատկապես զգացվում է եվրոպական երկրներում, Հնդկաստանում, Չինաստանում, Եգիպտոսում, Իսրայելում: Վերջին տարիներ բուսակերների կտրուկ աճ է գրանցվել նաեւ Ռուսաստանում:

Աշխարհի ամենահայտնի սննդի կետերից մեկը McDonald's-ը, որ բարձր պահանջարկ ունի ամենաճարպակալած պետությունում՝ ԱՄՆ-ում, գրեթե շահույթ չէր ստանում հատկապես Չինաստանում եւ Հնդկաստանում: Հենց այդ պատճառով, նախորդ տարի ընկերությունում որոշեցին բացել նաեւ առանձին սննդի կետ բուսակերների համար: Ճաշացանկում սալաթներ են, բրնձից, ոսպից, եգիպտացորենից եւ կարտոֆիլից պատրաստված կոտլետներ, սնկային ճաշատեսակներ: Այժմ կազմակերպությունը մտադրվել է նմանատիպ սննդի կետեր բացել նաեւ Ավստրալիայում, Չինաստանում, Բելգիայում:

Մեր երկրում բուսակերներն այնքան էլ շատ չեն, ըստ որոշ հաշվարկների, բուսակերները կազմում են բնակչության առավելագույնը 5 տոկոսը: Դա բացատրվում է նրանով, որ հայկական ներկայիս խոհանոցը հիմնականում մսեղենից է բաղկացած, եւ շատերը նախապատվություն են տալիս մսային կերակուրներին: Շատերն էլ դա սով ու տառապանք տեսած ազգի սինդրոմ են համարում. «Քանի կա՝ ուտենք, չի բացառվում, որ վաղը չի լինի»:

Թեպետ ժամանակի ընթացքում այդ տեսակետի հետեւորդներն ավելի են նվազում, սակայն որոշակի վերաբերմունք բուսակերների հանդեպ ձեւավորված չէ:

Եթե եվրոպական երկրների եւ ԱՊՀ-ի ռեստորաններում առանձին հատվածով ներկայացվում է բուսակերների համար առաջարկվող ճաշացանկը, ապա Երեւանում նման վերաբերմունք գոյություն չունի: Ավելին, միս տաղակած յուղի մեջ կտապակեն նաեւ կարտոֆիլն ու կիրամցնեն նախապես բուսակեր ներկայացած հաճախորդին: «Իսկ դուք ձո՞ւկ էլ չեք ուտում, բա հա՞վ», կհարցնեն երեւանյան սրճարաններում կամ սննդի կետերում, խորհուրդ տալով՝ այսօր էլ բացառություն արեք ու միս կերեք, ի՞նչ կլինի որ:

Գրեթե նույնն է վերաբերմունքը կա նաեւ հասարակության մեջ: Բոլոր բուսակերները կհավաստիացնեն, որ խնջույքների ժամանակ ողջ գերդաստանը կսկսի քեզ համոզել, որ մի կտոր խորոված ուտես, ու մերժում ստանալով նեղանում են:

Վահագն Վարդումյանը հիմալայան յոգայի մասնագետ է: Արդեն 16 տարի բուսակեր է: Ասում է՝ առաջին 2-3 տարին ստիպված էր բոլորին ապացուցել, որ ինքը բուսակեր է, որ թաքուն միս չի ուտում, որ ինքը աղանդավոր չէ, խմբակներ չի հաճախում եւ այլն: Հետո սկսեցին լուրջ վերաբերվել: «Էլ կենացներ չեն ձոնում իմ պատվին, չեն ասում՝ բա իմ ձեռքով սարքած խորոված չե՞ս ուզում ուտել, ուրեմն ես հարգանք չունե՞մ, եւ այլն»:

Վահագնը բուսակեր դարձավ առողջական խնդիրների պատճառով: Բազմաթիվ բժիշկներ չէին կարողանում հասկանալ, թե սուր ցավերն ինչից են: Բժիշկներից մեկն ասաց՝ որոշ ժամանակով դադարեցրու միս ուտելը: «Երկու-երեք ամիս անց փոփոխություն զգացի, իսկ որոշ ժամանակ անց ընդհանրապես մոռացա ցավերը: Արդեն 16 տարի բուսակեր եմ եւ ինձ հրաշալի եմ զգում: Արշավների եմ մասնակցում, ակտիվ կյանքով եմ ապրում եւ քաղցած չեմ մնում, ինչպես կարծում են շատերը»:

Վիկտորյա Պողոսյանն արդեն 5 տարի բուսակեր է: Բակում անասուն են մորթել, ինքը տեսել է ու ազդվել: Սկզբում միս չէր կարողանում ուտել զուտ այդ տեսարանի պատճառով, ժամանակի ընթացքում հասկացավ, որ առանց մսի ավելի լավ է զգում՝ առույգ է, դեմքի գույնը լավացել է, մարսողական խնդիրներն անցյալում են մնացել: «Ես իմ շրջապատին չեմ պարտադրում, որ դառնան բուսակեր, դա յուրաքանչյուրի ընտրությունն է», ասում է Վիկտորյան՝ խորհուրդ տալով մինչ բուսակերության անցնելը բժշկական հետազոտության ենթարկվել, թեպետ բուսակերությունն արդեն առողջ ապրելակերպ է:

Էնդոկրինոլոգ **Բամիրե Բաղրամյանն** էլ շեշտում է, որ բժշկության տեսակետից խորհուրդ չի տրվում բուսակերության անցնել երեխաներին, հղիներին եւ քրոնիկ հիվանդներին: «Բուսական սնունդ պետք է օգտագործեն հատկապես ճարպակալած, երիկամային հիվանդություններով մարդիկ»: Մնացյալի պարագայում բանջարեղենային սնունդը գերադասելի է, սակայն եթե մսի պահանջ եք զգում, շաբաթական երկու անգամ քիչ քանակությամբ ոչ յուղոտ միս թույլատրելի է:

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 2.11.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: